№ 3 (104) X ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
"Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԳՈՂԹԱՆԻ ՁԱՒԱԿ — ՄՇՈՅ ՄԱՏԱՂ

ԳՈՒՐԳԷՆ

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԴԻՏՈՒՄ)

—

Նոր-Բայազէտեան գնդի զինուոր էր Գուրգէնը, բայց հայրենիքի գժբախտութիւնը թոյլ չտուեց երկար շարունակել պաշտօնական զինավարժութիւնը։ 1894-95 թուի հայկական կոտորածները վրդովեցին նրա հանգստութիւնը։ Վրէժի ծարաւը այրում, խորովում էր նրա զգայուն սիրտը։ Եւ ահա երբ 1896 թուին լսեց Վրէժստանի Դաշնակցական Կեդրոնական Կոմիտէի յեղափոխական կոչը՝ նա պայթեց. „Էլ ո՞ր օրւայ համար պիտի գործէ հրացանս, երբ Մեծ Մարդասպանը կը-բակի ու արեան ծով է դարձրել Մայր-Հայաստանը"։ Այդ գլացմունքով վառուած՝ սուս ու փուս ծլկեց Գուրգէնը զօրքի շարքերից և մի քանի կամաւոր ընկերներով ներկայացաւ „Վրէժ" կազմակերպութեան։



ԲԱՂԴԱՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ — BAGDASSAR MALIAN
tué à Mouche

Իր սակաւախօս բնաւորութեամբ, վտանգաւոր գործերում՝ ցոյց տրուած անվեհերութեամբ՝ նա շուտով ընկերների սիրելին դարձաւ։ 1896 թուի սեպտեմբերին Բօլգարացու անվեհեր խմբի հետ պնվտանգ մտաւ Վան (տես „Դրօշակ", № 28, 1896)։ Այնտեղից՝ քաջաբար կուելով՝ խումբը անցաւ Հայոց Ձոր, ուր „Կիմա-մարագի" յայտնի կուից նոյնպէս անվտանգ ազատուելով՝ վերադարձաւ „Վրէժի" շրջանը։

1896 թուի ծրագրած արշաւանքը զանազան հանգամանքներից չ'իրագործուեց և յետաձգուեց յետագայ տարուան։ Հետևապէս կամաւորները պիտի ցրուէին։ Արհեստ իմացողները — կազմակերպութեանը ծախք չպատճառելու համար — զբաղուեցան արհեստներով։ Գուրգէնը արհեստ չուներ, բայց սրտիցը չէր տալիս հեռանալ, թէև ժամանակաւորապէս, գործող ընկերներից, — և նա ստանձնում է խոհարարի պաշտօն կազմակերպութեան զինագործների բնակարանում։ Ընկերների այսպիսի նկատողութիւններին՝ թէ „Գուրգէն, ախր ինչո՞ւ ես մեզ ամաչացնում քո այդ դերով" — պատասխանում էր. „Դաշնակցութեան սկզբունքով՝ աշխատանքի հաւասարութիւն պէտք է լինի մեր մէջ. ես առայժմ կարող եմ օգնել ձեզ իմ այս աշխատանքով"։ Ագուլեցիներին յատուկ խնայողութեամբ (նա ծնուած էր Վերին-Ագուլիս, 1873 թուին) անտեսութիւնը ծայրայեղութեան էր հասցրել։ Մի քանի ամսւայ արած ծախքերը, $^1/_2$ և $^1/_4$ կոպէկներով գրուած հաշիւները՝ մինչև այժմ անսովոր ճշտապահութեան և խնայողութեան օրինակներ են մնում մեր ընկերների շրջանում։ Իր „խոհարարութիւնից" յետոյ՝ 1897 թուի յունվարի 25-ին Գուրգէնը վերադարձաւ Կովկաս, որպէսզի անձամբ պատմի Կովկասի ընկերներին յեղափոխական կեանքի քաղցրութիւնը։ Դարուն բացուելուն պէս, նա՝ արդէն կատարած իր միսսիան, նորից յայտնուեց „Վրէժում" նոր ընկերներով, զրաման նպաստով և ռազմամթերքի առատ պաշարով։ Նա „սիրող" չէր, այլ մարմնացած յեղափոխական կուող ուստի չէր կարող գործից հեռու մնալ, երկրից դուրս ապրել...

Այդ պատմական բոպէում՝ Մ...թը կատարեալ զինուորական բանակատեղիի էր նմանում. կամաւորների խումբ-խումբ ժողովելը հեռաւոր տեղերից, նրանց կանոնաւոր հրացանագութեան վարժութիւնները, զինուորական արհեստանոցների անընդհատ աշխատանքը և մատակարարման կանոնաւորութիւնը — այդ բոլորը ա-

ռանձին ջանք և հոգատարութիւն էր պահանջում։ Ամէն ոք իր մասնագիտութեամբ պէտք է օգնէր ընդհանուր գործին։ Գուրգէնը ևս ունէր իր պարտականութիւնները. նա էր մատակարարում ամբողջ արշաւախմբի ռազմական հագուստը, նրան էր յանձնուած նաև 50 կամաւորների կերակրելն ու զինուորական վարժութիւնները։ Օրինակելի էին նրա զինուորական վարժութիւնները՝ հայկական բարբառով։

Դեռ առաջուց վճռած լինելով երկրի մէջ գործել, Գուրգէնը էլ համբերութիւն չ՝ունեցաւ սպասել և 97 թւի արշաւախումբին միանալ։ Արշաւանքից մի շաբաթ առաջ Վասպուրական մեկնող Տէրոյեանի քաջամարտիկ խմբի 30 կամաւորներից մէկը՝ պաշտելի Գուրգէնն էր։ Տակաւին հնչում են շատերիս ականջներին նրա հրաժեշտի նուիրական խօսքերը՝—„Տղե՛ր, ց՝տեսութիւն եմ՝ ասում միայն. կը գաք երկիր և մենք այնտեղ, հայրենիքում, կը տեսնուենք“...

Վանի լճի արևելեան մասում՝ Գուրգէնը 10 ընկերներով բաժանուելով Տէրոյեանից, ապահով անցնում է Բաղէշ և միանում Սերոբի, Ուրուականի և միւսների հետ։ Այդ ժամանակ մի քանի տեղեկագիր-նամակներով նկարագրեց երկրի վիճակը։ Նա գրում էր. „Ժողովուրդը այլևս չէ վախենում մեռնելուց, դանակը ոսկորին է հասել. եղած-չեղածը պատրաստ է զէնքի տալ և տալիս է. սակայն այստեղ բաւարար քանակութեամբ զէնք չէ ճարվում. զէ՛նք, զէ՛նք հասցրէ՛ք“։ Այդ ոգով էլ նա գործում էր, պտտելով մինչև իր մահը, այն է մինչև 1899 թիւը՝ Մուշի, Բաղէշի և *** շրջաններում, ուր նա թողեց անմոռանալի հետքեր, առաջնակարգ կազմակերպող յեղափոխականի փայլուն անուն։

Գուրգէնի համար շատ պարզ էր, որ երկրի մէջ յեղափոխականի կեանքը շատ էլ երկար չէ տևում, շնորհիւ սուլթանի ծառայ՝ հայ մատնիչների։ Տեռորիստների ձեռքերը յոգնեցին, բայց դաւաճանները չվերջացան, չխրատուեցան։ Մատնիչի համար ի՞նչ արժէք ունէր այդ թանկագին կեանքը... Եւ ահա 99-ի ապրիլի 24-ին Մուշի Ցրոնք գիւղի մէջ, դարձեալ մարագի հերոսական կուից յետոյ — տեսնում ենք արդէն Գուրգէնի նահատակումը, 26 տարեկան հասակում... [1]։

Անմոռաց անունիդ, անքար գերեզմանիդ մատաղ, թանկագին ընկե՛ր։ Հերոսաբար պարտքդ կատարելով՝ մուրազիդ հասար, դու՝ Գողթանի հարազատ զաւա՛կ։ Ընկար հրացանը ձեռքիդ՝ թշնամիներիդ կոտորելով։ Բախտաւոր է Գողթանը քեզ պէս հարազատին մատաղ բերելով Մշոյ սեղանին — Ազատութեան Սուրբ Գործին։

1) Տես „Դրօշակ“ №№ 6 և 8, 1899։

ԳՈՒՐԳԷՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1899 ԱՊՐԻԼ — 1900 ԱՊՐԻԼԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ)

Գըլգըլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերէն.
Ծիծեռները ծրւ-ծրւ եկան
Գարնան գալը երգելէն։

Գարուն չկայ հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.
Գերեզմանս հողին հաւասար,
Թող փուշ բուսնի իմ վրէն...

Գնա՛, ծիծեռ... թո՛ղ ինձ մենակ՝
Վերքը սրտիս՝ հողի տակ...

Բայց երբ տեսնես թշնամու դէմ
Հայ ժողովուրդ սարի պէս
Զէնքը ձեռին հպարտ կանգնած,
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պէս,—

Ա՜խ, այն օրը արի, ծըւա՛,
Գարնան գալը նո՛ր կանչէ.—
Հայո՛ց գարնան, որ բիւր բարև
Սիրտս խորէն զողանջէ...

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

V

Նախորդ յօդուածների շարքում մենք բաւական խօսել ենք կոտորածների պատճառ ու առիթների մասին։ Աւելացնենք մեր ասածների վրայ և այն, որ եթէ հայերին կոտորելու համար սուլթանը միակ արգելք տեսնէր առիթների պակասութեան մէջ, նա ինքը շատ հեշտութեամբ կարող էր ստեղծել այդպիսիք՝ իր իմացած ձևով և կատարելապէս համաձայն տեղին ու հանգամանքներին... Այս բոլորից հետևում է ուրեմն, որ յեղափոխական գործնական ընթացքը քննադատելիս՝ պէտք է իսկապէս յեղափոխական ճանաչուած ձեռնարկութիւնները գնահատուեն կոտորածներից դուրս, այսինքն այն եղանակով, ինչ եղանակով մենք քննեցինք այդ ընթացքը նախորդ յօդուածում։ Ուրիշ տեսակ վարուել՝ կը նշանակէր պարզապէս հերքել շատ ակներև ճշմարտութիւններ և իվերջոյ՝ նոյնիսկ մեր շարժման իրաւունքը։ Սակայն այդպէս չէ նայում իրերին ամբոխային տրամաբանութիւնը. նա կարելի է համարում՝ իր ասպետների բերանում այնպիսի խօսքեր դնել, ինչպիսիք մենք բերինք անցեալ անգամ, այն է՝ „յեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, չկար անհրաժեշտ նախապատրաստութիւն և ժողովրդի կազմակերպութիւն, չկար գործի մէջ սառն դատողութիւն“։

Ի՞նչ է նշանակում „շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին“։

Երբ 1878 թուին Խրիմեան արքեպիսկ. վերադարձաւ Բերլինի վեհաժողովից՝ նա ասում էր իրեն դիմողներին մօտաւորապէս հետեւեալը.

„Հայերս ոչինչ չստացանք։ Այնտեղ ապուրը ուտում էին երկաթեայ գդալներով, իսկ մենք ունէինք միայն թղթէ գդալ“։

Այսպէս էր խօսում Խրիմեանի բերանով Բերլին գնացած պատգամաւորութիւնը. այդ խօսքերում էին ամփոփւում այն ապաւորութիւնները, որ ստացել էր հայ պատգամաւորութիւնը Բերլինում և Եւրոպայի առաջնակարգ քաղաքագէտների հետ շփւելուց յետոյ։ Պէտք է կռուել — ահա այդ խօսքերի իմաստը։

Այնուհետև 1879 թուի յունիսի 12-ին Պօլսի անգլիական դեսպան Լէյարդը հեռագրում էր նախարար Սալսբիւրիին.

„Եթէ Բարձր Դուռը չզգուշանայ, եթէ նա չգործէ հեռատեսութեամբ եւ խելքով, Ասիայում մի գեղեցիկ օր կը ծագի հայկական հարց, ինչպէս Եւրոպայում ծագեց բուլղարական հարցը, որ պատճառ եղաւ վերջին պատերազմին“...

Եւ դէնը՝ այդ երկար հեռագրի բովանդակութիւնից երևում է, որ յիշեալ „գեղեցիկ օրը“ կը լինի այն ժամը, երբ կ՚արտայայտւի երկրում հայկական դատի առթիւ ուեռ շարժում։

1880 թուի յունիսի 11-ին վեց մեծ պետութիւնների մի համանման նօտան արտաքին գործերի նախարար Աբեդին-փաշային՝ վերջանում էր այս խօսքերով.

„Պարտք ենք համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրել դէպի այն լուրջ պատասխանատուութիւնը, որ իր վրայ է վերցնում Բարձրագոյն Դուռը, ուշացնելով այն միջոցների իրագործումը (61-րդ յօդուածի պահանջները), որ պետութիւնները անհրաժեշտ են համարում ինչպէս տաճկական կայսրութեան, նոյնպէս եւ ամբողջ Եւրոպայի շահերի համար“։

Ձենք երկարացնում։ „Կապոյտ գրքերից“ պատահական կերպով վերցրած այս կտորները ցոյց են տալիս, որ պետութիւնները բացարձակապէս աշխատում էին հայկական ուեռ շարժման տեղիք չտալ, գտնելով, որ դա սպառնում է բուլղարական հարց դառնալ և առաջ բերել այնպիսի միջամտութիւններ յօգուտ հայերի, որոնք նոյնիսկ կարող էին պատերազմի տեղիք տալ։ Եւ երևի այդպիսի վտանգներից խուսափելով էր, որ այնուհետև համարեա ամբողջ 80-ական թուականների ընթացքում եւրոպական պետութիւնները նպաստեցին Թիւրքիային՝ հայկական հարցը մոռացութեան մատնելու համար։

Հարցնում ենք ուրեմն. յեղափոխականների ընթացքը համապատասխանո՞ւմ էր „քաղաքական հանգամանքներին“ թէ՞ ոչ։ Ի՞նչ կարող էր մեզ համար աւելի ձեռնտու լինել քան մեր հարցի բուլղարական հարց դառնալը։ Եւ Բերլինի վկայութիւնները արդեօք չե՞ն ապացուցանում, որ միայն յեղափոխական շարժման հարուածները պէտք է ստիպէին հերթական խնդիր դարձնել մեր բազմաչարչար դատը։ Եւ որպէսզի ուեռ սխալանքի մէջ չ՚ընկնենք, թողնենք այս հարցերին պատասխանի „ժամանակի“ յայտնի քաղաքագէտներից մէկը։ 1890 թուին, այսինքն հայկական հարցի համարեա 10-ամեայ մոռացութիւնից յետոյ՝ աւստրիական մինիստր Կալնոկին, խօսելով հայերի պահանջների մասին, բացարձակապէս յայտարարեց.

„Եւրոպա չկայ, եւ մինչեւ որ հայկական հողը գաղախի արիւնով, թող գիտենան հայերը, որ ոչինչ չեն ստանայ“։

Ի՞նչ էին նշանակում այս խօսքերը, եթէ ոչ՝ Եւրոպա չկայ, բայց նա կը լինի, երբ հայերը բացարձակ կռուի ճանապարհը կընտրեն իրենց պահանջների համար։

Եթէ յիշում է ընթերցողը, Բոլէն-Ծակմէնը ևս, 1889 թուին՝ վերլուծելով եւրոպական դիւանագիտութեան ընթացքը հայկական հարցում, գալիս է այն՝ եզրակացութեան, որ Եւրոպան անտարբեր գտնուեց դէպի հայերը, որովհետև հայերը չէին ապստամբուել։

Կրկնում ենք ուրեմն. համապատասխանո՞ւմ էր յեղափոխականների բռնած դիրքը „ժամանակի քաղաքական պահանջներին“ թէ՞ ոչ։ Խնդիրը այդպիսով՝ քաղաքական պայմանները արհամարելումը չէր — սովորական մեղադրանք յեղափոխականների հասցէին։—այլ այդ քաղաքականութեան վրայ ազդելու միջոցների վրայ։

Թող չ՚ասեն մեզ թէ այն, ինչ նպատակայարմար էր, օրինակ, այս ինչ թուականին, կարող էր վնասակար լինել յետագայ թուականներին ևլն։ Հասարակական մի հոսանք, որ հող ունի կեանքում, չէ կարող առաջ չգալ, իսկ առաջ գալով՝ չէ կարող չզարգանալ և կամ շեղւել իր ընթացքից, ինչպէս ջուրը նորմալ պայմաններում չէ կարող չհոսալ, երբ նրա առաջ բացւում է ճանապարհ։ Գործածելով հռչակաւոր Լասսալի խօսքերը, դա „երկաթեայ անհրաժեշտութիւն“ է, որ պայմանաւորւում է որոշ հասարակական ուժերի փոխադարձ յարաբերութիւններով։ Երկուսից մէկը ուրեմն. կամ՝ յեղափոխական շարժումը համապատասխանում էր ժամանակի „քաղաքական պահանջներին“ կամ ոչ։ Եւ եթէ համապատասխանում էր, ուրեմն՝ յեղափոխական ձեռնարկները սիստեմատիկաբար պէտք է շարունակւէին, քանի չէր ապահովւած Եւրոպայի իրական միջամտութիւնը։ Այո՛, այդ էր պահանջում ժողովրդի դրութիւնը, այդ էին մեզ թելադրում և ուրիշ ազգերի օրինակները։ Եւ երբ մեզ ասում են, որ յեղափոխական ձեռնարկները եղան կոտորածների առիթ կամ պատճառ, մենք չենք հաւատում դրան, այլ՝ արևելեան

հարցին ծանօթ հեղինակներից շատերի հետ միասին՝ մնում ենք այն համոզման, որ դա հետևանք էր որքան զարհուրելի, նոյնքան և անմիտ, որքան դժբախտ, նոյնքան և անճոռնի, անօրմալ քաղաքական խաղերի,—խաղերի, որոնց բացառիկ այլանդակութիւնը հասկանալու համար՝ պէտք է ինկատի ունենալ այն սոսկալի, այն հրէշաւոր անհեթեթութիւնները, որոնք ուղեկցում են երևոյթը։

Մի կողմ թողնելով հեռաւոր անցեալը, յիշենք, որ ռուս-տաճկական պատերազմից յետոյ Ռուսաստանը, այս կամ այն դիտումներով, միշտ պաշտպանում էր Հայոց հարցը. նոյն կառավարութիւնը 94 թւի Սասունի մասնաժողովում ունէր իր ներկայացուցիչը. դրանից յետոյ նա մասնակցում էր բարենորոգումների ծրագրի մշակման։ Աւելի բնական ոչինչ չէր կարելի երևակայել, քան՝ որ նոյն կառավարութիւնը, թէկուզ միայն իրեն յարգելով, անէր այնուհետ և հետևեալ քայլը — պահանջէր ռէֆօրմների գործադրութիւնը։ Այսպէս էր նայում փաստին ամբողջ աշխարհը. այդպէս վերաբերւեց մայիսեան ծրագրին և ամբողջ հայութիւնը։ Բայց ահա այլանդակութիւնը։ Այս բոլորի հետ միաժամանակ Լօբանովի „ռուս“ երևակայութեան մէջ օրէօր աւելի և աւելի զօրեղ նաւաճումներ է սկսում անել այնպիսի մի անհեթեթութիւն, թէ հայկական բարենորոգումների խնդիրը „կարող է ստեղծել սահմանակից մի նոր Բուլղարիա Ռուսաստանի համար“։ Ինչո՞ւ. — Որովհետև հայերի դրութիւնը մի փոքր պէտք է բարեփոխւի, այսինքն՝ նրանք պէտք է այնպիսի պայմաններում դրւեն, որ աւելի պակաս անպատւեն, թալանւեն և կոտորւեն, կարծես՝ ռուսական բոլոր սահմաններում տաճկահայերից լաւ ապրող և քիւրդերից ու թիւրքերից չմորթւող, չթալանւող փոքրիկ ազգութիւնները մի-մի Բուլղարիաներ են Ռուսաստանի համար, կամ կարծես՝ սուլթան Համիդի ստորագրած բարեփոխումները աւելի լայն էին քան սուլթան Մէջիդի Խատի-Հիւմայունում խոստացած կարգերը, որոնց գործադրութիւնը ոչ մի կառավարութիւն երբեք այնպիսի խստութեամբ չէր պահանջում թիւրքիայից, ինչպէս 1856 թւականից սկսած այդ անում էր Ռուսաստանը։

Նայենք և Ալբիոնին։ Այն Սալիսբիւրին, որ 1879 թւին — տեսնելով, որ Բերլինի դաշնագրի միւս կէտերը մեծ մասամբ իրագործւած են բացի Անգլիայի „առանձին երաշխաւորութեան“ տակ վերցրած Փոքր-Ասիայի վերաբերեալ յօդւածը—հարկաւոր համարեց Զմիւռնիայի ծոցում մինչևիսկ ծովային ցոյց անելու թիւրքիայի դէմ,—այդ նոյն Սալսբիւրին 96 թւին իր կառավարութեան „բացարձակ դաւաճանութիւնը արդարացնելու համար՝ ապացուցանում էր թէ „Տաւրոս լեռները անմատչելի են“ անգլիական նաւատորմի համար։ Ո՞վ, քան լորդ Սալսբիւրին, աւելի լաւ գիտէ, որ աշխարհիս երեսին չկայ ոչ մի ուրիշ պետութիւն, որի ծովային սահմանները պաշարել կամ գրաւելը, մի խօսքով որին վնասելը այնքան դիւրին լինէր, ինչպէս Թիւրքիային, որ ոչ մի նաւատորմ չ՚ունի։ Թող չ՚ասեն մեզ, որ Ռուսաստանի ընդդիմադրութիւնը պատերազմի վտանգ էր առաջ բերում Անգլիայի համար. 1895 թւի օգոստոսի 28-ին Պետերբուրգի անգլիական դեսպանից և նոյն օգոստոսի 29-ին Պօլսի դեսպանից ստացւած հեռագիրները հաղորդում էին անգլիական կառավարութեան, որ Լօբանովը իր կողմից կարելի զիջումների շարքն է դասում նաև „համաձայնութիւն՝ թողնել Անգլիային և Տաճկաստանին դէմ առ դէմ“ [1]։ Այս չտեսնւած անհեթեթութիւնների տիպարը սակայն ներկայացնում է լորդ Ռոզբերի։ Այդ թեթևամիտ, բայց ջղային եսամոլութեամբ բռնւած լորդը՝ Գլադստօնի Լիվրպօլում յօգուտ հայերի արտասանած ճառից յետոյ՝ դուրս է գալիս նոյեմբեր ամսին Էդինբուրգում խօսելու և բացարձակ դաւաճանութեան այնպիսի մի քայլ է անում, որ անսպասելի էր ոչ միայն կողմնակի դիտողների համար, այլև նոյնիսկ իր ամենամօտիկ և ամենաթափանցող քաղաքագէտ-բարեկամների համար. նա հրաժարւում է անգլիական ազատամիտ կուսակցութեան ղեկավարի դերից, ասելով, որ՝ Գլադստօնը և ազատամիտ կուսակցութիւնը պահանջելով պահպանողական կառավարութիւնից ոևէ վճռական քայլ անել յօգուտ հայերի, իբր թէ սխալ ընթացք են բռնում։ Բայց լորդի դաւաճանութիւնը չէ վերջանում Գլադստօնով, իր բոլոր կուսակիցներով և հայերով։ Լորդը միևնոյն ճառում դաւաճանում է և ինքն իրեն։ Այդ ճառից ընդամենը 8 ամիս առաջ, այն է 1896 մարտի 3-ին, իր արտասանած մի ուրիշ ճառի մէջ նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից շատ անգամ աւելին՝ քան այդ արեց Գլադստօնը իր վերին աստիճանի զգոյշ ճառի մէջ։ Նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից, թէկուզ առանց միւս պետութիւնների համաձայնութեան, մենակ գործի դիմել յօգուտ հայերի և նոյնիսկ պարզ ակնարկում էր, որ այդ առանձին գործողութիւնը կարող է արտայայտւել ոևէ տաճկական նաւահանգստի պաշարումով [2]։

Անգլօ-ռուսական հակամարտութիւն՝ թունաւորւած հրէշաւոր կասկածների ուրւականներով—ահա այն սոսկալի հողը, ուր մեր բախտը որոշելու հրաւիրւած „քաղաքագէտները“ կորցրին ոչ միայն իրենց խիղճ և ամօթը, որ չեն էլ ուզում ունենալ, այլև իրենց խելք ու դատելու ընդունակութիւնները։ Նայէք, ինչ էր գրում Պօլսի անգլիական դեսպանը իր կառավարութեան 1879 թւին.

„Բուլղարական միևնոյն ինտրիգները այժմ կատարւում են Փոքր-Ասիայում՝ թէ այն նպատակով, որ վերականգնեն հայկական ազգութիւնը եւ թէ նրա

1) Stu. Turqey, № 1, 1896.
2) „Սուլթան եւ պետութիւններ“ Մակկոշի.

համար, որ ստեղծեն իրերի այնպիսի մի դրութիւն, որ սարսափի մի աղաղակ ծնէր ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ եւ եւրոպական միջամտութիւն առաջ բերէր։ Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ տաճիկ մինիստրներին, որ եթէ նրանք չչտապեն իկատար ածել Բերլինի դաշնագրի որոշումը հայերի մասին... այն ժամանակ նրանք կը նկատեն, բայց արդէն շատ ուշ, որ սուլթանը կը զրկուի մի քանի գաւառներից"։

Ո՞վ է „բուլղարական ինտրիգներ" սարքողը.—ռուսը. ո՞վ է ուզում „եւրոպական միջամտութիւն առաջ բերել". — ռուսը. ո՞վ պէտք է „մի քանի գաւառներից զրկի սուլթանին"—ռուսը։ Այդպէս է մտածում անգլիացին, այդպէս է հասկանում իրականութիւնը անգլիական „փորձած" դիպլոմատը։ Միևնոյն ժամանակ հարցրէք ռուսին. ո՞վ է Տաճկաստանում շարունակ „ինտրիգներ լարում" Ռուսաստանի դէմ.— Անգլիան. ո՞վ է անդադար „պետութիւններին հրաւիրում միջամտել" հայկական հարցին. — Անգլիան, որ ուզում է Ռուսաստանի դէմ պատնէշ կազմել Փոքր-Ասիայում. ո՞վ է խրախուսում հայ յեղափոխական շարժումը.—Անգլիան, որ նպատակ ունի դրանով Տաճկաստանում իր կորցրած ազդեցութիւնը ձեռք բերել — այդպէս կը պատասխանի ձեզ ռուսը, այդ կ'ասէ ձեզ „հեռատես" ռուս դիպլոմատը։

Եկէք և նախատեսէք։ Եկէք և գործունէութեան ծրագիր մշակեցէք ոչ թէ մարդկային ամբողջ պատմութեան մէջ ուսումնասիրուած սկզբունքները ինկատի առնելով, այլ այն այլանդակ, անօրմալ, ոչ մի հետևողականութեան չենթարկուող քաղաքական կասկածների ցատկոտումները, որոնք ամէն բոպէ կարող են տեղի ունենալ մի ամենալիրբ պոլիտիկանի գլխում, մի քաղաքական զէվզէկի երևակայութեան մէջ կամ՝ մի տխմար „չինովնիկի" հաշիւներում — մի „չինովնիկի", որ նոր պաշտօնի անցած՝ բռնուած է նոր բան հնարելու տենչով և անպատճառ իր նախորդներից չնախատեսնուած վտանգներ է ուզում հնարել պետութեան համար... Եկէք և յարմարեցէք քաղաքական „դոպէների" պահանջներին։ Եւ ե՞րբ ու որի՞ն յարմարէին յեղափոխականները—ռուսին թէ անգլիացուն, ա՛յն Սօլսբիւրիին, որ խօսում էր Տաւրոսի անմատչելիութեան մասին, թէ՞ այն Սօլսբիւրիին, որ 96 թուի սեպտեմբերին սպառնում էր սուլթանին թէ՝ „եթէ իր կայսրութեան վատ վարչութիւնը շարունակուի, նա կը զրկուի իր գահից" *). ա՛յն Լօբանովին յարմարէին, որ գոյութիւն ունէր 1895 թուի առաջին կիսում, թէ՞ այն Լօբանովին, որ պատկերացաւ մեր առաջ միևնոյն թուի երկրորդ կիսում. ա՛յն Ռոզբերիին յարմարէին, որ մարտ ամսին էր խօսում, թէ՞ այն Ռոզբերիին, որ զառանցում էր նոյն տարւայ նոյեմբերին։ Կա՞ր նոյնիսկ յարմարելու կարելիութիւն կամ գոնէ կարելիութեան ստուեր անգամ։

*) Ed. Driault. La Question d'Orient, եր. 258.

Եւ թող ոչ ոք չկարծէ, թէ յեղափոխական մեր փանատիկոսութիւնն է, որ ստիպում է մեզ Եւրոպայի պատասխանատուութեանը թողնել հայկական կոտորածները։ Հազարաւոր հրատարակութիւններում, հազարաւոր ամբիոններից, երկրագնդի հազարաւոր անկիւններում ամբողջ մարդկութեան մտածող և զգացող մասը ևս ուրիշ կերպ չգնահատեց այն զարհուրելի հովանաւորութիւնը, որ 61-րդ յօդուածով տուին հայերիս եւրոպական պետութիւնները իրենց այլասեռուած և նախատեսնելու ընդունակութիւններից զուրկ դիպլոմատներով։

Թող դրօշմէ ուրեմն պատմութիւնը ժամանակակից Եւրոպայի ճակատին հրէշաւոր դաւաճանութեան յաւիտենական արատը, որից սակայն միշտ ազատ կը մնայ հայ երիտասարդութեան այն փոքրամասնութիւնը, որ ընտրեց կռուի փշոտ դաշտը՝ տոգորուած իր ծնող ժողովրդի բարեկեցութեան գաղափարով, պատրաստ միշտ զոհուելու սուրբ հայրենիքին...

(Վերջը միւս անգամ)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

20 յունուար 1900

Անմոռանալի Սերոբի մահուանէն շաբաթ մը վերջ՝ քիւրդեր առիթ գտնելով՝ գացին դէպի Սասնոյ հայ գիւղեր, ժամանակէ մ'իվեր չգանձուած հարկերը գանձելու։ Ասոնցմէ՝ սասնցի Պշարի (քիւրդ աղայ) տղայ Խալիլ երկու հարիւր հոգւով կուգայ Դալորի Սպէրան գիւղի վրայ, ուր կը գտնուի Սերոբի կնքահայր Մակարը։ Քաջարի զինուորը կը հաւաքէ գիւղի մէջի զինեալ երիտասարդները և կ'ըսէ. „Տղա՛յք, ահաւասիկ Խալիլ աղան Աղբիւրի գլուխն կերաւ և հիմա ալ այսչափ մարդով եկեր և դէպի գիւղն կը յառաջանայ իր ուզածն անելու։ Ալ ինչո՞ւ կ'ապրինք մենք Աղբիւրից աւելի չենք"... Այդ խօսքերէն ետք՝ իսկոյն տասը զինեալով գիւղից կ'ելնէ և հանդիպելով թշնամուն, հրաման կ'ընէ կրակ ընելու։ Իսկոյն Խալիլի մարդկանցից, որոնք պատճառ եղած էին Աղբիւրի մահուան, չորս հոգի գընդակի զոհ կ'երթան և վեց հոգի ալ կը վիրաւորուին։ Մնացեալ բազմութիւնը, մօտ 190 հոգի, իրենց փոքրիկ կորուստը տեսնելով, կը ձգեն կը փախչին։ Հայերի կողմից զոհ եղան երկու հոգի միայն՝ ԶԱՔԱՐ և ՊՕՂՈՍ քաջ երիտասարդները։ Լուրը իսկոյն կառավարութեան ականջը կը հասնի և քիչ ժամանակէն զօրք կ'ուղարկուի հայերի դէմ։ Զօրքը մէկ կողմ և հայերը միւս կողմ կեցեր կը սպասէին... Զօրքին հրաման չկար զարկելու։

Միաժամանակ թիւրք կառավարութիւնը ոստիկաններ կ'ուղարկէ Դալորիկ, և տէր Գաբրիէլ քահանան և մի քանի ազդեցիկ հայեր ձերբակալելով՝ Մուշ կը բերեն և կը բանտարկեն, իբր խռովարարներ։

Շաբաթ չի անցներ որ դաշտին մէջ արիւնհեղութիւն չրլլայ. վերջին տասը-քսան օրուան մէջ՝ Շէխլան գիւղացի Մահմատ-Ալի քիւրդը նոյն գիւղի Մկրտիչ քա-

հանան զարկեց և փախաւ։ Կառավարութիւնը, մարդասպանը բռնելու փոխարէն, իբր հեղինակ երկու հայ բերեց բանտարկեց։ Ահա և այլ դէպքեր։ Թիլ գիւղացի քիւրդ Թամոն Աւզաղբիւրի ռէս Ցակոբին գիւղէն դուրս հանեց և սպաննեց։ Պատճառը։ Պատճառը այն էր, որ կտոր մը հացի տէր էր, այսինքն ունևոր էր։ Պալակցի աշիրէթներէն Սատոյի տղայ Իւսուֆն Երեշտէր գիւղի տէր Ցարութիւնին հրացանով զարկեց և վիրաւորեց։ Գընդակը անոր կռնէն դուրս ելնելով՝ կը հանդիպի նոյն գիւղի ժամկոչին և ան ալ կը վիրաւորուի։ Երկուքի վիճակն ալ ծանր է։ Աւրինջ գիւղի Զաֆար-աղի երկու քիւրդ լամուկներ զարկեցին նոյն գիւղէ ռէս Դաւթի տղայ Թադէոսին։ Բայց որ մէկն ասեմ կամ գրեմ — չեմ գիտեր...

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 22 մարտ

Դուք երևի արդէն նկատեցիք անցեալ նամակից, թէ ինչ զօրաւոր և շատ անգամ անհաւատալի վճռական դեր է խաղում բիւրօկրատիական Ռուսաստանում՝ չի-նովնիկի անձնաւորութիւնը և նոյնիսկ կապրիզը։

Դա մի փաստ է, վաղուց ճանաչուած և շատ անգամ արձանագրուած ռուսաց գրականութեան մէջ, բայց, իհարկէ, անուղղակի ճանապարհներով, շնորհիւ գրաքննութեան ծայրայեղ ճնշման։ Բանաստեղծ Նեկրասով, երգիծաբաններ՝ Գոգոլ և Շչեդրին, թատերագրող Օստրովսկի, ժողովրդագրող Ուսպէնսկի, պուբլիցիստ Միխայլովսկի և շատերը կենդանի ռուս գրողներից՝ հրաշալի էջեր ունին՝ պատկերացնող այդ երևոյթը։ Հէնց նորերս հռչակաւոր Լեվ Տոլստոյ՝ իր „Ցարութիւն“ բոմանի մէջ, — որի ֆրանսերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ Փարիզում — իմիջի այլոց նոյն տխուր երևոյթն է շեշտում, բաց անելով սիրտ կտրատող տեսարաններ բանտային կեանքից։

Սակայն ես հեռու եմ՝ հարցի ընդհանուր քննութեան մէջ մտնելու դիտաւորութիւնից, և կը շատանամ մի քանի փաստեր միայն բերելով կովկասեան կեանքից, որ իդէպ է ասել, մինչև այժմ էլ *terra incognita* է նոյն իսկ ռուսաց գրողների համար, — փաստեր, որոնք ձեզ վերջնականապէս կը համոզեն, որ բիւրօկրատիական ճնշումները աւելի ուժեղ, նոյնիսկ կրկնակի են Կովկասում, քան ներքին Ռուսաստանում, քանի որ ընդհանուր ճնշումներին Կովկասում աւելանում է և մի այլ, արդէն յայտնի ճնշում, այն է ազգայնական ճնշումը։

Մինչև այսօր էլ, հէնց որ կառավարութիւնը նշանակում է ուէ պաշտօնեայ Կովկասում, առաջին հարցը, որ տրւում է, այն է՝ թէ ինչպէս է վերաբերւում նա ազգայնական հարցերին։ Դժբախտաբար նոյնը կարելի է ասել և աւելի բարձր պաշտօնեաների համար։ Երբ հեռագիրը լուր է բերում, թէ կայսրը այն ինչ մարդուն նշանակեց, դիցուք, ներքին գործերի մինիստր, — Կովկասում, ինչպէս և Լեհաստանում կամ Ֆինլանդիայում, առաջին հարցը էլի այն է, թէ ինչպէս է վերաբերւում մինիստրը այս կամ այն ազգութեան։

Դա մի այնպիսի քաջածանօթ երևոյթ է, որ յայտնի է ոչ միայն մեծ-մեծ քաղաքներում, այլ նոյնիսկ շատ յետ ընկած գիւղերում, ամենատգէտ գիւղական հասարակութեան մէջ։ Դիցուք Անդրկովկասի ուէ յետին գաւառում — Նոր-Բայազէթի, Զանգէզուրի կամ Հին-Նախիջևանի գաւառներում — նշանակւում է մի գաւառապետ կամ աւելի ստոր պաշտօնեայ՝ մի պրիստաւ։ Անմիջապէս ամբողջ գաւառում այն հարցն է զարթնում, թէ արդեօք նոր պրիստաւը հայատեաց է թէ թրքասէր և կամ կաշառակեր է թէ օրինաւոր։ Օրէնքով արգելւած է կաշառակերութիւնը. օրէնքով թոյլ չի տրւում հային հալածել նրա համար, որ նա հայ է, կամ վրացուն ու թուրքին պաշտպանել միմիայն նրա համար, որ նա վրացի կամ թուրք է.— բայց ո՞վ է օրէնքին նայողը։

Ահա մի քանի գծեր իրականութիւնից։

Սրանից մի քանի տարի առաջ, Գանձակի նահանգի գաւառներից մէկում՝ Նաբի անունով թուրք աւազակը տակնուվրայ էր անում ամբողջ գաւառը։ Տեղական իշխանութիւնը ոչ մի կերպ չէր կարողանում ազատւել դրանից։ Գիտէք ինչո՞ւ. որովհետև ինքը գաւառապետի օգնականը, մի թուրք պաշտօնեայ, ամենամօտիկ յարաբերութեան մէջ էր աւազակի հետ, և ամէն անգամ, երբ ձիաւորներ էին դուրս գալիս նրան բռնելու կամ սպանելու, նա ծածուկ նախազգուշացնում էր աւազակապետին, և սա իսկոյն ծլկում էր։ Նոյն միջոցներին գաւառապետը, մի լեհացի, հեռացաւ պաշտօնից և թուրք օգնականը, իհարկէ կաշառքով, կարողացաւ գաւառապետի պաշտօնը ստանալ՝ երևի իտրիտուր աւազակներին ցոյց տւած հովանաւորութեան։ Հէնց այդ ժամանակ բարձրից հրաման է գալիս նահանգապետին՝ „վերջ դնել աւազակային խմբի ասպատակութիւններին՝ ինչպէս և լինի“։ Երևի նահանգապետը այդ միջոցին է իմանում „գործերի դրութիւնը“, ուստի և հրահանգում է թուրք գաւառապետին. „եթէ մինչև մի ամիս Նաբին իր խմբով կամ բռնւած կամ փախցրած չլինի՝ դուք անմիջապէս կը զրկւէք ձեր պաշտօնից“։ Ի՞նչ էք կարծում,— ամիս չ'անցած արիւնարբու աւազակը դուրս եկաւ այդ գաւառից և քանի որ իրեն բարեկամ թուրքը վարում էր գաւառապետի արդիւնաւէտ պաշտօնը, այլևս այդ գաւառը ոտք չդրեց...

Մի ուրիշ գիծ։ Երևանի նահանգի մի քանի գաւառներում, որտեղ թուրքերը մեծ թիւ են կազմում, պրիստաւների պաշտօնը մեծ մասամբ թիւրքերի ձեռքն էր։ Մի օր՝ նոր եկած գաւառապետին — որ ազգով ռուս էր — օգտակար թւեց հոգալ, որ թուրք պրիստաւները, նոյնիսկ լաւերը, հեռացւեն և նրանց տեղ նշանակւեն ռուսներ։ Շատ չ'անցած գաւառում գլուխ բարձրացրեց աւազակութիւնը՝ ամենայանդուգն չափերով։ Եւ քննութիւնից երևաց, որ թուրք ծառայողները և պաշտօնաղուրկ թուրք պրիստաւներն էին այդ աւազակութեան աճեցնողները, որպէսզի ցոյց տան, որ հանգստութիւնը միայն այն ժամանակ հնարաւոր կը լինի, երբ իրենք թուրքերը կը լինեն պաշտօնի մէջ։ Նոյն երևոյթը կրկնւեց և Գանձակի գաւառում, երբ մի քանի տարի առաջ, նահանգապետ գեներալ Կիրէեվ — որի մասին առիթ եմ ունեցել խօսել երկրորդ նամակում — ազգով ռուս, և ֆանատիկ ռուս, փորձեց հեռացնել ոստիկանական

պաշտօններից Թուրքերին, նրանց տեղ ռուսներ նշանակելու համար։ Գաւառը աւազակութիւնների օջախ դարձաւ, մանաւանդ այն պատճառով, որ Թուրքերին հեռացնելուց յետոյ „ագգասէր“ նահանգապետը, իրեն տուած հրահանգին ենթարկուելով, պաշտօնի հրաւիրեց ոչ թէ ժողովուրդը ճանաչող օրինաւոր պաշտօնեաներ՝ լինեն նրանք հայ, ռուս թէ մահմէտական, այլ միմիայն իր անձնական ծանօթ ռուսներ, այն էլ ներքին նահանգներից, ուրիշ խօսքով՝ այնպիսի մարդիկ, որոնք ոչինչ հասկացողութիւն չ՚ունեն Գանձակի նահանգի տեղական պայմանների մասին և ուրեմն յաջողութեամբ վարել իրենց պաշտօնը չէին կարող։

Դուք տեսնում է.ք ուրեմն, որ չինովնիկների գործնէութեան հարցում այժմ ահագին դեր է կատարում ազգայնութիւնն և ոչ թէ նրանց արժանաւորութիւնը։ Կառավարութիւնը առանց ոևէ գրական հետազօտութեան այն եզրակացութեան է հասել, որ Կովկասում բոլոր կառավարչական պաշտօնները պիտի տալ ռուսներին և դրա շնորհիւ տեղական ադմինիստրացիայի մէջ գլխաւոր տարրը կազմում են ռուսներ։ Նրանք չգիտեն տեղական ոչ մի լեզու. ծանօթ չեն ժողովրդի կեանքին, տեղական պայմաններին և այդ պատճառով, եթէ նրանք երբեմն օրինաւոր մարդիկ էլ են, իրօք լաւ պաշտօնեայ չեն լինում։ Շրջապատողները իրենց ձեռքում նրանց խաղալիք են շինում։—Տեղացիներին պաշտօններ չեն տալիս կամ շատ քիչ։ Վրացուն եթէ ոչ միշտ՝ գոնէ մեծ մասամբ ուղարկում են այնտեղ, որտեղ ազգաբնակութիւնը հայ է, այն յուսով, որ վրացին հայի հետ չի միանալ, այլ թշնամական դիրք կը բռնի։ Աւելի ներողամիտ են դէպի Թուրքերը, բայց դժբախտաբար, շնորհիւ ադմինիստրացիայի ընդհանուր ապականութեան, փոքրիշատէ զարգացած, օրինաւոր Թուրքերը չեն, որ պաշտօնի են հրաւիրւում, այլ մեծ մասամբ բոլորովին տգէտ, բայց ճարպիկ ու առատ կերպով ռուս „մեծաւորներին“ կաշառողները։ Եւ շարունակում՝ են, իհարկէ, գրանք վարել գործերը բոլորովին պարսկական կարգերով, — ծեծ, եասաուլներ, կաշառք, ձրի ապրուստ գիւղերում, նոյնիսկ ենիչէրական բռնութիւններ և իլլումն այդ բոլորի՝ անվերջ աւազակութիւն, գողութիւն և յափշտակութիւն Թուրքերի ձեռքով, որոնց սիրտ է տալիս այն, որ „մեծաւորը իրենց մարդն է“։

Հայերին, ինչպէս ուրիշ անգամ էլ առիթ է եղել շեշտելու, սովորաբար պաշտօն չեն տալիս Կովկասում։ Զինուորականին այժմ ուղարկում են Լեհաստան կամ հիւսիսային նահանգները ու Սիբիր։ Նոյնիսկ հայ զինուորներին սկսել են ուղարկել ներքին նահանգները։ Ադմինստրացիայի քիչ-շատ պատասխանատու պաշտօնի մէջ այժմ համարեա հայ չկայ։ Կառավարութիւնը կասկածում է, որ նրանք կը միանան երևակայական „հայկական շարժման“։ Մինչև անգամ այնպիսի անմեղ պաշտօններ, ինչպէս է փոստային ծառայութիւնը, ակցիզային պաշտօնը, հարկային տեսչութիւնը և իվերջոյ դատաստանական պրիստավի անշան պաշտօնը սիստէմատիկաբար խլում են հայերից կամ եթէ չեն խլում, այդ պաշտօնները ունեցող հայերին ուղարկում են այնպիսի տեղեր, ուր ապրում են վրացիներ, Թուրքեր, լեռնականներ, ռուսներ։ Երևակայել կարո՞ղ է.ք, որ նոյնիսկ պետական բանկում հային պաշտօն չեն ուզում տալ։ Հազարից մէկը։ Մի ֆինանսիստ հայ երիտասարդ, մինչև իսկ կապերով, պաշտօն է խնդրում պետական բանկի կովկասեան ճիւղերից մէկում։ Պետերբուրգում չեն ամաչում գրաւոր կերպով նրան պատասխանել, որ սիրով նրան, իբր լաւ ֆինանսիստի, պաշտօն կը տան, որտեղ կամենայ, միմիայն ոչ... Կովկասում։ Հայերին հեռացնում են մանաւանդ Թիւրքիայի սահմանագծից, որպէսզի սահմանագլխի կէտերում ոչ մի կառավարչական պաշտօն՝ տանջող Թիւրքահայերի ազգակիցների ձեռքում չլինի...

Այս տխուր փաստերից դժուար է եզրակացնել, որ կովկասեան վարչութեան մեխանիզմը, դրուած լինելով այդ աստիճան անբնական և անմիտ հիմքերի վրայ, լաւ լինել չի կարող։ Եւ իրաւի։ Ոչ մի մարմին այնքան ապականուած չէ, որքան կովկասեան ադմինիստրացիան։ Նա ապականուած է այն գլխաւոր պատճառով, որ տեղական լաւ, օրինաւոր ուժերը տեղ չեն գտնում նրա մէջ։ Տեղ չեն գտնում և լաւ ռուսները, որովհետև բուն Ռուսաստանից մեծ մասամբ միայն այն տեսակ ռուսներ են համաձայնում Թողնել իրենց մայր հայրենիքը և գնալ հեռու Կովկաս (որ երկար ժամանակ աքսորի վայր էր ռուսների համար), որոնք արժէք, պաշտօն, ապագայ չ՚ունեն և որոնք գնում են ապրուստ որոնելու այնտեղ, որտեղ ռուս ծագում ունենալը արդէն մի գրաւական է արդիւնաւէտ պաշտօն ստանալու համար...

Աւելի տխուր է այս „երևոյթի“ քաղաքական կողմը, և այդ, մանաւանդ վերջին 15-20 տարուայ ընթացքում, արտայայտւում է համարեա ամէն մի քայլափոխում։ Կովկասեան ազգաբնակութիւնների, մանաւանդ հայերի ժամանակակից պատմութեան մէջ, անթիւ փաստեր կան՝ ապացուցանող այդ դրութիւնը, և ես կը բերեմ այդ փաստերից մի քանիսը։

1895-96 թուականին, երբ Թիւրքահայերի խնդիրը սուր կերպարանք էր ստացել և Կովկասում՝ ամէն մի չինովնիկ իր պարտքն էր համարում „հայկական դաւադրութիւններ“ քրքրել և գտնել, մի ուղղափառ-գաւառապետ սկսեց մինը միւսի ետևից զեկուցումներ ուղարկել իր նահանգապետին՝ բացատրելով, որ քաղաքի մէջ „հայերը գաղտնի պատրաստութիւններ են տեսնում, զէնքեր են գնում և ուղարկում, գիշերային գաղտնի ժողովներ են կազմակերպում“... և վերջացրեց նրանով, որ սկսեց նահանգապետից Թոյլտուութիւն խնդրել՝ „աքսորելու զեկավարներին՝ գաւառի խաղաղութիւնը ապահովելու համար“... Նահանգապետ ***, որ երկար ժամանակ ոչ մի պատասխան չէր տալիս այդ „քաղաքական զեկուցագրերին“, յանկարծ հեռագրով իր մօտ կանչեց գաւառապետին։ Հաւաքելով իր բոլոր փաստերը, գաւառապետը ճանապարհ ընկաւ նահանգական քաղաքը։ Նա արդէն վաղորդայն վայելում էր այն քաղցր բոպէները, երբ նահանգապետը լսելով նրա զեկուցումները, կը սեղմի իր ձեռքը և անմիջապէս կ՚առաջարկի նոր շքանշան „ի վարձատրութիւն նրա արթուն հսկողութեան“։ Հասաւ տեսակցութեան օրը։ — „Պատմեցէք բերանացի, ինչ որ գիտէք“ — և գաւառապետը սկսեց... անլուր առասպելներ։ Հէնց այն բոպէին, երբ նա յաղթական ժպիտով աւարտեց իր երկար պատմութիւնը, ծերունի նահանգապետը վեր թռաւ տեղից և որոտաց. „Վերադարձէք այսօր և եթ, մի կողմ Թողէք այդ բոլոր յիմար պատմութիւնները, որոնք միայն ձեր գլխում՝

գոյութիւն ունին, և կուեցէք մի բանի դէմ — թուրք աւազակների դէմ, որոնք քարուքանդ են անում գաւառը։ Իսկ ինչ վերաբերում է հայերին՝ նրանց համար ես եմ երաշխաւոր, հասկացաք"։ Եւ այդ օրից սկսած՝ ամէն ինչ փոխուեց ու գաւառապետի զեկուցումները միշտ վերջանում էին այս խօսքերով՝ „Հայերը կատարելապէս խաղաղ են և օրինապահ"։

Մի ուրիշ փաստ։ 80-ական թուականներին, երբ Երևանի նահանգը կառավարում էր գեներալ Ճալիկով, —որ համ ինքը վատ էր տրամադրուած դէպի հայերը, համ էլ շրջապատուած էր այնպիսի ռուս „քաղաքագէտներով", որոնք միշտ նրա ականջի տակ փսփսում էին, թէ պէտք է „խստօրէն հսկել" հայերի կեդրոնին՝ Արարատեան դաշտին, — ամբողջ Երևանի նահանգում անպակաս էին դաւադրութիւններ, հայկական սեպարատիզմ և անհնազանդութիւններ։ Իբրև հետևանք այդ „չինովնիկական քաղաքականութեան"— խուզարկութիւններ, կաշառքներ, նոյնիսկ աքսոր։ Նահանգապետը այնտեղ հասաւ, որ սկսեց կուեցնել թուրքերին հայերի հետ՝ գաղտնիքներ իմանալու համար։ Բայց հէնց որ նոյն „հայկական" նահանգում նշանակուեց մի ուրիշ նահանգապետ, կոմս Տիզենգաուզէն, համեմատաբար աւելի արդար և տակտով մի մարդ՝ թուրքերն էլ դադարեցրին կուել հայերի հետ, ձերբակալութիւններ և խուզարկութիւններն էլ քչացան, թէև դա թիւրքահայոց շարժման ամենատաք ժամանակն էր։ Մի ուրիշ նահանգում, այն է Գանձակի նահանգում, քանի որ նահանգապետը իշխան Նակաշիձէն էր,—կովկասեցի, որ չէր սիրում „հարցեր ստեղծել",—գոյութիւն չունէր ոչ մի քաղաքական-հայկական հարց. բայց հէնց որ նոյն նահանգում նշանակուեց նահանգապետ Կիրէեվ, մի „թթու" ռուս, թշնամի ամէն մի ուրիշ ազգութեան, դիւթական գաւազանի մի հարուածով, նորից սկսուեց „հայկական շարժումը", նորից խուզարկութիւններ, նորից կասկածներ...

Դարձեալ մի բնորոշ փաստ։ 1890 թուին Մակար կաթողիկոսի օրով, Էջմիածնում կատարւում էր մեռոնի օրհնութիւն, որ գրաւել էր Կովկասի բոլոր կողմերից բաւական բազմութիւն։ Բոլորովին պատահմամբ նոյն միջոցին Էջմիածին էր գնացել մի շատ նշանաւոր հայ գործող։ Եւ ահա բոլորովին անհասկանալի պատճառով՝ սկսում են լուրեր տարածուել թէ Էջմիածնում պատրաստւում է երկու քաղաքական մեծ ցոյց՝ մէկը Մակարի դէմ, միւսը՝ յօգուտ թիւրքահայերի, և այդ՝ ղեկավարութեամբ յիշեալ նշանաւոր հայի։ Երևանի ոստիկանութիւնը սկսում է շարժուել և կրակի վրայ իւղ ածել։ Միւռոնօրհնութիւնից երկու օր առաջ կառավարչապետ Շէրէմէտեվ ստանում է Երևանի այն ժամանակւայ նահանգապետ գեներալ Ֆրէզէից մի հեռագիր, որով նահանգապետը՝ իբրև „քաղաքական նշանաւոր գիւտ"՝ հաղորդում է թէ Էջմիածնում պատրաստւում է ժողովրդական ցոյց՝ ղեկավարութեամբ... (հաղորդուած է անունը), թոյլտուութիւն խնդրելով խիստ միջոցներ ձեռք առնել, այն է՝ „24 ժամում հեռացնել ղեկավարին Երևանի նահանգից և մի գունդ զօրք ուղարկել Էջմիածին՝ կարգ պահպանելու համար"։ Կառավարչապետ Շէրէմէտեվ, որ, հակառակ գեներալ Ֆրէզէի տրամադրութեան, լաւ էր վերաբերւում դէպի հայերը և անձամբ ճանաչում էր այն անձնաւորութիւնը, որ յիշատակուած էր իբրև ղեկավար, զգալով, որ այդպիսի միջոցներ ձեռք առնելով կարելի է չեղած տեղից բարդութիւններ ստեղծել, անմիջապէս կարգադրում է ոչ մի արտասովոր միջոցի չդիմել։ Ասում են, որ մեռոնօրհնութեան ամբողջ օրը՝ Շէրէմէտեվը անհամբեր և բաւական անհանգիստ սպասում էր տեղեկութիւնների Էջմիածնից։ Եւ հեռագիրը լուր բերեց, որ ամէն ինչ խաղաղ անցաւ։—Երևակայեցէք մի բոպէ, թէ ինչ ծանր հետևանքներ կարող էին տեղի ունենալ, եթէ գեներալ Ֆրէզէին յաջողուէր մարդիկ աքսորել և զօրք ուղարկել՝ պաշարման վիճակի մէջ դնելու ահագին բազմութիւնը... Ոչէ մասնաւոր կռիւ, ոչէ պատահական աղմուկ կարող էր թաւալ զօրապետին իբր „նշան", և ահա պիտի հոսէր անմեղ մարդկանց արիւն, ստեղծելով հայկական ապըստամբութեան նոր հարց Էջմիածնի վանքում...

Էլի մի ուրիշ փաստ։ 1893 թուի սկզբի օրերին Թիֆլիզում լուր է տարածւում թէ հայերը Զրօրհնենքի տօնին, երբ տասնեակ հազարներով հաւաքւում են իմիասին տօնել այդ կրօնական օրը, պիտի ցոյց անեն կառավարութեան դէմ։ Լուրը սկիզբ էր առել հետևեալ դէպքից։ Դրանից մի քանի օր առաջ, այն է 1892 թուի դեկտեմբերի 27-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ ականաւոր հայ գրող Գրիգոր Արծրունու թաղումը, որ համազգային սուգի կերպարանք ստացաւ—բազմաթիւ պատգամաւորութիւններ, հարիւրաւոր պսակներ, աւելի քան 50 հազար ժողովուրդ։ Հայերի սուգը երևի դուր չ'եկաւ „ռուսացման" ներկայացուցիչներին։ Եւ եկեղեցուց դուրս գալուց յետոյ, երբ հանդէսը պիտի անցնէր քաղաքի գլխաւոր փողոցով, որտեղ գտնւում է Արծրունիների տոհմական շքեղ տունը, և որի առաջ հայերը՝ ըստ եկեղեցական սովորութեան՝ ուզում էին հոգեհանգիստ կատարել, ոստիկանութիւնը արգելեց, առաջարկելով անցնել երկրորդական մի փողոցով։ Տխրասիրտ բազմութիւնը ականջ չդրեց և առաջ անցաւ։ Տեղի ունեցաւ մի անխուսափելի ընդհարում ոստիկանների և սգաւոր հայերի մէջ։ Անմիջապէս սկսուեցին բազմաթիւ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ, հիմնուած ինչպէս միշտ՝ այն ենթադրութեան վրայ, որ հայերը վճռել էին թաղման առիթով ցոյց անել կառավարութեան դէմ... Բայց դրանով չվերջացաւ կասկածը։ Տասն օրից յետոյ, երբ պէտք է տեղի ունենար հայերի մի նոր կրօնական համախումբ՝ Զրօրհնենքի տօնի առիթով,—դարևոր սովորութիւն, որ տեղի է ունենում ամէն տարի,—բորբոքուած „չինովնիկները" շշուկ բարձրացրին, թէ այդ նոր համախմբման ժամանակ էլ հայերը ուզում են նոր ցոյց անել։ „Ուզում են"-ը դարձաւ „կարող են", „կարող են"-ը՝ „վճռել են", և ահա պատրաստ էր Զրօրհնենքի ապստամբութեան ծրագիրը։ Հայերի դէմ կատաղած „չինովնիկները" ոչ մի միջոց չխնայեցին գրգռել իշխանութիւնը։ Լուր պտտեց քաղաքում մինչև անգամ, որ առաջարկուած է հանդէսին ներկայ եղող ռուս զինուորներին բաժանել սովորական՝ այդ օրւայ համար ընդունուած խլատ փամփուշտների հետ նաև գնդակաւոր փամփուշտներ, իսկ հայ զինուորներին տալ միմիայն խլատներ։ Բարեբախտաբար տեղացի զինուորների գնդապետը բողոքում է այդ ծրագրի դէմ ասելով. „Ես կասկած չունեմ՝ իմ զինուորների դէմ, և եթէ գօրքի վրայ էլ սկսենք կասկածել, էլ ո՞ւմ վրայ պիտի յոյս դնենք"։ Նոյնպէս բարեբախտաբար, բարձր իշխա-

նութեան մի քանի ներկայացուցիչները՝ աւելի հեռատես գտնուելով, յայտարարել են, որ իրենք երաշխաւոր են հայերի օրինապահութեան մասին, առաջարկելով ոչ մի արտասովոր միջոցի դիմել։

Ոչ մի շարժում, իհարկէ, տեղի չ՚ունեցաւ, բացի այն շարժումից, որ հայերը գործեցին դէպի սառած Քուռը՝ խաչը ջուր գցելու համար, ճիշտ այնպէս, ինչպէս ռուսները և վրացիք։ Արդ, ի՞նչ կարող էր տեղի ունենալ, եթէ տասնեակ հազարաւոր ամբոխը շրջապատուէր զինուորներով և ոստիկաններով, բոլորն էլ զրգռուած ցնորամիտ կասկածներով։ Երևակայեցէք ինքներդ...

Ահա վերջապէս էլի մի փաստ՝ փոքր ինչ կոմիքական բնոյթով։ 1897 թուին էր։ Աշնան մի գեղեցիկ օր Թիֆլիսի ոստիկանատանը ստացւում է մի անանիմ նամակ։ Իրարանցում։ Ոստիկանապետը վազում է նահանգապետի մօտ. նահանգապետը՝ կառավարչապետի օգնականի մօտ, օգնականը՝ կառավարչապետի մօտ։ Ո՜հ սարսափ։ Հայերը ապստամբուում են։ Ապստամբութի՛ւն Կովկասի մայրաքաղաքում, բարձր իշխանութեան քթի տակ։ Ապացոյց։ Ապացոյցներ շատ են, բայց ահա նրանցից ամենաառաջինը, ամենամեծը, ամենայայտնին,—„Զիու“։ Ի՞նչ։ Այո՛, մի աննշանակ, խորհրդաւոր, նորաստեղծ լուռ, որ պիտի ծառայէ հայերին իբր ազդանշան յարձակուելու այն տների վրայ, որոնց ճակատին գրուած է „Զիու“։ Ոստիկանութիւնը գաղտնօրէն փնտռում է այսպիսի տներ։ Մեծ է նրանց թիւը, և համարեա քաղաքի բոլոր մասերում։ Ճիշտ է, ոստիկանութիւնը աչքով տեսաւ, որ այդ նշանակ „Զիուն“ գրուած է ոչ միայն այնպիսի տների վրայ, ուր ապրում են վրացի, ռուս, գերմանացի, թուրք, այլև այնպիսի տների վրայ, ուր բնակուում են հայեր, նոյնիսկ հայ „հայրենասէրներ“ — բայց ոչինչ։ „Այդ աբեղ է իշխանութիւնը խաբելու համար“ — վճռեցին խելօք ոստիկանները։ Եւ ահա սկսուեցին խորհրդակցութիւններ նահանգապետի մօտ, կառավարչապետի պալատում — դաղտնի, սոսկալի, ծանր խորհրդակցութիւններ։ Պէտք էր վճռել. — ի՞նչ անել. արդեօ՞ք պաշարման մէջ դնել ամբողջ քաղաքը, թէ պաշարել միմիայն „ղեկավարների“ բնակարանները և բռնել բոլորին... Մի օր ևս՝ և գուցէ քաղաքի վրայ կը պայթէր մի անսովոր դժբախտութիւն։ Բայց—փա՜ռք պատահմունքին—դեռ խիստ միջոցներին դիմելու վճիռը չկայացած՝ ոստիկանապետը իմանում է գաղտնիքը։ Ռուս մի չինովնիկի որդին հօրից փող է խնդրում։ — Ինչո՞ւ, հարցնում՝ է հայրը։ — Կաւիճ պէտք է առնեմ, որ „Զիու“ գրեմ, ինչպէս ընկերներս են գրում... Եւ ո՜վ խայտառակութիւն։ Ապստամբութեան գաղտնիքը բացուած է։ Ոստիկանապետը՝ տեղեկացած եղելութեան՝ վազում է կառավարչապետի մօտ և քրտինքի մէջ խեղդուած, կարմրած, հեւալով՝ պարզում այդ խորհրդաւոր „Զիուն“, հայկական ապստամբութեան սոսկալի ազդանշանը, ուրիշ խօսքով՝ — աշակերտական այդ հանաքը։ Այո՛, ոչ աւել, ոչ պակաս—սոսկ աշակերտական հանաքը։ Երկրորդ գիմնազիայի աշակերտները, կատաղած իրենց մի ուսուցչի դէմ, վրդովուած նրա խստութիւններից, վճռում են նրան խայտառակել։ Նրան տալիս են շինծու մի անուն, „Զիու“ և որոշում՝ ոչ թէ միայն գիմնազիայի մէջ, այլ ամբողջ քաղաքում՝ փողոցներում, հրապարակների, սիւնների, վերջապէս տների պատերի վրայ, ուր որ այդ հնար է՝ կաւիճով գրել „Զիու“, որպէսզի ուսուցիչը՝ ուր էլ աչքը դարձնի՝ միայն այդ խօսքը՝ „Զիու, Զիու, Զիու“ կարդայ։—Որպիսի՜ կատակ։ Եւ այն միջոցին, երբ չարաճճի գիմնազիստները կաւիճ էին գնում իրենց յարձակումները ատելի ուսուցչի վրայ համատարած դարձնելու, Թիֆլիսի ռուս իշխանութիւնը զօրք և զէնք էր պատրաստում „կաւճեայ ապստամբութիւնը“ արմատախիլ անելու համար...

Մեծ սխալ կը լինի կարծել, որ „կաւճեայ ապստամբութեան“ այս բախտաւոր վախճանը ուրախացրեց բոլոր չինովնիկներին։ Անտարակոյս եղան ուրախացողներ, բայց մեծ մասը խոժոռեցին իրենց դէմքը, երբ տեսան, որ էլի մի անգամ „առիթը“ ձեռքից փախաւ „մեծ ծառայութիւններ մատուցանելու հայրենիքին“ կամ պարզ ասած՝ նոր շքանշաններ և աստիճաններ ստանալու։

Շքանշա՞ն և աստիճա՞ն — ահա դա է, որ անյագ և անխիղճ բիւրօկրատիային եռանդ, սիրտ և ուժ է տալիս „դաւադրութիւններ“ հնարել և „ապստամբութիւններ“ ստեղծել, քաջ գիտնալով, որ աւելի շուտ այդ ճանապարհով, քան թէ ազնիւ ծառայութեամբ, կարելի է ձեռք բերել և դիրք, և աստիճան, և շքանշան, և գովասանք... Դա է, որ հակառակ աշխարհ փաստերին, հակառակ օրէնքի, հակառակ օրինականութեան, յանդգնութիւն է տալիս չինովնիկներին խաղեր խաղալու ոչ միայն անհատ-քաղաքացիների, այլև ամբողջ մի ազգի դէմին։ Դա է, եթէ կամենում էք, ռուս չինովնիկների ապականութեան գլխաւոր և անսպառ աղբիւրը։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Դարի վերջալոյսն է։ Պանծալի դարը—շատ անգամ հռչակուած, բայց և շա՜տ անգամ նզովուած—կը յանձնուի շուտով անցեալի ալիքներին։ Մարդկային բարեկեցութեան վիթխարի ծրագիրներ կը կտակէ նա յաջորդ հարիւրամեակին — ծրագիրներ՝ մասամբ իրագործուած, բայց մեծ մասամբ դեռ իրագործելի։ Որոշ տեսակէտով նման են իրար դարուս արշալոյսն ու վերջալոյսը. ինչպէս մի դար առաջ՝ նոյնպէս և այժմ, դեռ ամբողջ քաղաքակրթուած աշխարհը ծփում է ալէկոծութեան մէջ. ստրուկ ազգերի ու դասակարգերի ահեղ գոյամարտը գերիշխող փաստն է թէ դարամուտին թէ դարավերջին։ Բայց որպի՜սի անդունդ երկու ծայրերի մէջ. որչա՜փ հեռու է գնացել պատմութեան անիւը...

Այնքան մեծ են ու բազմատեսակ քաղաքակրթութեան նուաճումները վերջին հարիւրամեակի մէջ, որ 19-րդ դարը կանգնած է անհամար դարերի շարքումէ որպէս մի հսկայ, եզակի, անզուգական։

Քաղաքակրթութեան նուաճումնե՞ր... Ի՞նչ ենք արդեօք հասկանում դրանով։ Արդեօք ժողովրդական մասսաների դարաւոր տենչանքներն իրականացա՞ն, մարդկային մեծամասնութիւնը ազատուե՞ց իր կեղեքիչների ձեռքից և արիւնոտ յեղափոխութիւնների շրջանն անցա՞։... Արդեօք ազատութեան գաղափարը յաղթանակե՞ց։

Եւ այո՛ և ո՛չ։

Յարաբերաբար՝ այո, բացարձակօրէն՝ ոչ։ Անուղղելի յոռետեսների և պատմութեան ընթացքը թիւր ըմբռնողների համար չկայ պրոգրէս։ Կայ միայն մշտնջենական կերպարանափոխութիւն միևնոյն ստրկութեան, միևնոյն մարդկային-հասարակական թշուառութեան. երբե՛ք երջանկութիւն։ Սակայն պատմութեան ճշմարիտ, գիտական ըմբռնումը լաւատես է։ Ամբողջ պատմական պրոցէսի մէջ սկզբից մինչև այսօր ազատութեան գաղափարի յառաջադիմութիւնը անժխտելի է։ Ազատ էր միջին դարերի ստրուկը հնադարեան գերիի համեմատութեամբ. աւելի ևս ազատ է այժմեան աշխատաւորը միջնադարեան ստրուկի դիմաց։ Դարուս ամէնայետին պրօլետարի և հին Հռովմի ու Աթէնքի ճշմարիտ գերիների միջև՝ անդունդը ահագին է։ Բայց դիմենք մեր հարիւրամեակին։

I

Մօտաւորապէս մի դար սրանից առաջ լիբերալիզմի փրկաւէտ հոսանքը — որ մի ժառանգութիւն էր 18-րդ „լուսաւոր“ դարի և որ հոգի ու մարմին էր առել ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ցնցումների մէջ — վարակել էր արդէն եւրոպական քաղաքակրթութեան պատկանող ազգերին։ Նա տարածւում էր արագ, համաճարակի պէս, սպառնալով բնաջինջ անել բոլոր հնադարեան ու միջնադարեան „սրբութիւնները“։ 19-րդ դարը մարդկային ընդհանուր ազատագրութեան հիմնաքարը դրեց։ Գիտութիւն, մատերիալիզմ, ազգայնական ու սոցիալական շարժումներ առաջ ընթացան ձեռք ձեռքի տուած, ներդաշնակ, որպէս մի վիթխարի ամբողջական հոսանք, տոգորուած մէկ գերագոյն բաղձանքով՝ ազատել մարդուն կրօնի ու տգիտութեան լծից, քաղաքական ու տնտեսական շղթաներից։ Աստուածը վռնտուեց բնութեան ու պատմութեան սահմաններից, և նրա հովանաւորեալ երկրաւոր բռնապետութիւնը դատապարտուեց մահուան։

Ազատութեան ոգին դարուս պահանջն էր, նրա էական և անդրդուելի տենդենցիան։ Արևմտեան Եւրոպայից սկսած մինչև Թիւրքաց բարբարոսութեան մատնուած փոքրիկ երկրները տարածւում էր ազատութեան անյաղթելի տենչը և ցնցում մասսաներին։ Լիբերալիզմը դառնում էր մի ճշմարիտ խարազան իշխողների համար. նա ծնում էր անընդհատ խռովութիւններ, վտանգելով գոյութիւն ունեցող քաղաքական-հասարակական կարգերը։ Պէտք էր մի պատուար ստեղծել այդ խարազանի դէմ։ Պէտք էր ռէակցիայի փողը հնչեցնել։ Եւ ահա 1815-ին երեք ցամաքային հզօր պետութիւններ՝ Ռուսաստան, Աւստրիա և Պրուսիա՝ կնքեցին հռչակաւոր „Սրբազան Դաշնակցութիւնը“ Վիէննայում, որը քրիստոնէական պարտք էր դնում իր անդամների վրայ՝ փոխադարձաբար աջակցել վտանգի րոպէներին։ Ուրիշ խօսքով՝ „Սրբազան Դաշնակցութիւնը“ սրբազնագոյն նպատակ էր դնում՝ խեղդել բոլոր հնարաւոր միջոցներով ժողովուրդների յեղափոխական ձգտումները և վախճան դնել ազատագրական շարժումներին։

„Խաղաղութեան հիմնական պայմանը՝ ներքին ապահովութիւնն է“ — տրամաբանում էր Մետերնիխ՝ բռնապետութեան ամէնադժնդակ փաստաբանը։ „Քրիստոնէական կրօնի սկզբունքներով տոգորուած՝ պիտի միանան պետութիւնները եղբայրական անբաժանելի միութեամբ և աստուածային գերագոյն պատգամների համեմատ՝ պիտի աջակցեն իրար ամէն պարագայում“ — այսպէս էր զառանցում միստիկ Ալէքսանդրը, որ անպարտելի Բօնապարտին խոնարհեցնելուց յետոյ ինքնիրեն երևակայում էր Յաման Եւրոպայի ընդհանուր հրամանատար։

Մեծ-մեծ սկզբունքները միշտ պատրաստ են բռնակալների բերաններում, երբ նրանք ձեռնարկում են արիւնոտ գործերի...

Ֆրանսիան իր 1789-ի ահեղ գաղափարներով մշտնջենական վտանգ էր բռնապետութեան համար։ Ազատութեան, հաւասարութեան և ժողովրդական գերիշխանութեան սկզբունքները սարսափեցնում էին Մետերնիխներին։ Պէտք էր մարել իսպառ յեղափոխութեան օջախը, ուսկից 20 տարի շարունակ այդ ահարկու գաղափարները, Նապոլէօնեան պատերազմների շնորհիւ, տարածւել էին Եւրոպայի այլևայլ ծայրերում։ „Հիւանդութիւնը օրէցօր աճում է, նրա առաջն առնելու միջոցնե՞ր են պէտք“ — անդադար կրկնում էր Մետերնիխ։

Եւ միացան թագաւորները „ի մի անբաժանելի Սրբազան Երրորդութիւն“։ Երբե՛ք ժողովուրդների դէմ՝ այդպիսի հսկայական դաւադրութիւն չէր կազմակերպւել։ Եւ երբեք թերևս ազատութեան դահճապետները այնքան ցինիկ ու անհեթեթ չէին եղել իրենց ազդարարութիւնների մէջ։ Քրիստոնէական եղբայրութիւն էին հռչակում վհատապետները, իսկ այդ հանդիսաւոր, սրտաշարժ ծանուցումների միջոցին, լսւում էր յօշոտուած Լեհաստանի հեծկլտանքը, որ մինչև երկինք էր հասնում։ Ողբում էր Իտալիան, որին մատնել էին աւստրիական ատելի բռնապետութեանը. ողբում էր Բելգիան, որին ստորադրել էին օտար Հոլանդիային, օտար՝ լեզուով, կրօնով, շահերով. ողբում էին գերմանացիները, որոնք քիչ առաջ ոտքի էին կանգնել՝ կուռելու յանուն ընդհանուր հայրենիքի ազատութեան, իսկ այժմ ենթարկւում էին բազմաթիւ իշխանների կամայականութիւններին։ Ամէն տեղ լաց ու հառաչանք։ Ամէն տեղ ծաղրւում, կոխկռտւում էր ազգայնական պատիւը, մարդկային իրաւունքները։ Եւրոպան իրար մէջ բաժանում էին միապետները, ինչպէս կը բաժանէին հողային անբնակ մի տարածութիւն։ Զուլում էին իրար հետ տարբեր ազգութիւններ, միանգամայն տարբեր, պատմական տրադիցիաներով։ Բովանդակ եւրոպական ազգաբնակութիւնը ներկայանում էր նրանց, որպէս անբան անասունների մի հսկայական հօտ, որ պէտք էր առաջ քշել մտրակով ու խարազանով, և որ անմռունչ, հլու հնազանդութեամբ պարտաւոր էր հետևել իր „աստուածընտիր“ առաջնորդներին։ Այդպէս էր տիրող հասկացողութիւնը։ Այդպէս է դեռ մինչև օրս էլ թագակիր դահիճների բարոյախօսութիւնը, նրանց աւետարանը.— կոյր, ֆանատիկոս՝ իրենց ըմբռնումների մէջ, կատաղի ու մոլեգնոտ՝ հանդէպ այն բոլոր մահկանացուների, որոնք խիզախում են բռնանալ իրենց յաւիտենական, „աստուածատուր“ արտօնութիւնների վրայ...

Բայց իրերի հոսանքը աւելի ուժեղ է, քան ամէնահզօր բռնակալը։ Իզուր Մետերնիխ, յեղափոխութեան այդ երդւեալ թշնամին, ճգնում էր յաւերժացնել տիրող վիճակը։ Ֆրանսիական յեղափոխութիւնը զարկ էր տւել ամէն տեղ ազգային ինքնաճանաչութեան.

ժողովուրդների գէթ իմացական մասը եկել էր այն գիտակցութեան, որ ամէն մի ազգի համար կեանքի ու բարգաւաճման անհրաժեշտագոյն պայմանն է՝ նրա անկախութիւնը: Գերմանիայում դեռ ևս հնչում էր կ ե օ ր ն է ր ի երգը. „Ա՜ճի՛ր գերմանական հայրենիք, աճիր մեր դիակների վրայ“: Դեռ թարմ էր այն սքանչելի օրերի յիշատակը, երբ Ֆ ի խ տ է, այդ հսկայ մետաֆիզիկ-փիլիսոփան, իր վերանցական սպեկուլեացիաները թողնելով, դուրս էր նետուել անձուկ կաբինետից և բոցաշունչ քարոզներով ելէքտրականացնում էր իր հայրենակիցներին: Դեռ չէին մոռացուել վերջապէս 1813-ի օրերը, երբ իրենք թագաւորներն էին բարձրաձայն ծանուցանում. „Ազա՜տ եղէք, ժողովուրդներ, ազատ մարդիկ ենք բոլորս“. . Ոսկէ խոստումներ — բայց, աւա՜ղ, ունայն — որ շռայլում էին Եւրոպայի հրամանատարները այն ժամանակ, երբ նրանց պէտք էր ոտքի հանել ժողովուրդներին ընդդէմ Նապոլէոնի... Դրժեցին խոստումը և փոխանակ հռչակած ազատութիւնը գէթ մասամբ իրագործելու, Եւրոպայի վրայ նշանակեցին մի հսկայ ու անողորմ ժանդարմ, որ և անուանեցին „Սրբազան Դաշնակցութիւն“. . .

Ազատութեան գաղափարը չմեռաւ, չսպանուեց: „Ազատութիւնը դագաղի մէջ անգամ ապրում է“ — ասում է Բեօրնէ: Այո, նա ապրեց նոյնիսկ „Սրբազան Դաշնակցութեան“ ամրակուռ դագաղի մէջ և աճելով, ուռչելով՝ ճայթեցրեց դագաղը: Յեղափոխութեան գաղափարը բնական անխախտելի օրէնքով զարգանում ու տարածւում էր նահատակ ազգերի մէջ: Մտքերի խմորումը աստիճանաբար սաստկանում էր համալսարաններում, զօրքի մէջ և ժողովրդի ստորին խաւերում, որոնց վրայ առանձնապէս ծանրացած էր բռնապետութեան լուծը: Մի նոր Եւրոպա էր բարձրանում խաւարի ու ստրկութեան մթնոլորտից — Ե ր ի տ ա ս ա ր դ Եւ ր օ պ ա՝ թարմ, կորովի, գաղափարական, որի կոչումն էր խզել հինաւուրց դաւանանքների հետ և առաջնորդել ժողովուրդներին դէպի սոցիալ-քաղաքական ազատագրութիւն: Իրաւ է, մի աննշան փոքրամասնութիւն էր դա, բայց միշտ և ամէն տեղ խիզախ փոքրամասնութիւնն է, որ հարթում է ազատութեան ճանապարհը. . .

(Շարունակելի)

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՀԱՅՐ ՇԱՐՄԸԹԱՆ. — Œuvres des Écoles d'Orient անուն երկասաթերթի վերջի երկու թիւերուն մէջ Հ. Շարմբեան երկու յօդուած ունի՝ „Տխրութիւն եւ յոյս“ ու „Պատմական ժամը“ վերնագրով: Հ ո գ ե լ ո յ ս Ազարեանէն ետքը, զարմանալի չէ որ օտար եկեղեցական մը այդքան անխոհեմ, վայրագ կոպտութեան հանող լեզու մը խառնէ հայերու մասին ցոյց տուած քրիստոնէական զգացումին մէջ: Ֆրանսացի եկեղեցականին յօդուածներուն մէջ չենք նշմարեր այն հոգին-հաւատքը բարեսիրութեան, այն անմեղ լեզուն, որով երբեմն կը կաղնդէր հայ ազգը անոր խորին վշտին վրայ բալասան դնելով, եթէ... որովայնախօս մը չէր: Մենք, հայերս, միամիտ էինք անոր անկեղծութեան վրայ, զի մեր հովորական յատկանիշներէն մին եղած է քարեբարեկ ուրիշներուն անյեսամիտ անշահախնդրութիւնով մը. դեռ ոսկեդարու „երանելի“ թարգմանիչները չէին ծգտէր իրենց ազգային լեզուն պարտաւորիչ ընելու դրացի տգէտ ժողովուրդներուն եւ անոնց համար լեզուի այբբէն կըստեղծէին:

Հայը Շարմբեան վեհանձնութեան, սրտի մեծութեան պատանքը տուաւ հայ ժողովրդին. մենք կը կարծէինք որ աչով տուածը ձախը չպիտի իմանայ, աւետարանի պատուէրին համեմատ, բայց բ ա ր ե ս ի ր տ հ ա յ ը ը, ձեռքը խղճին վրայ դրած՝ հընդունիր աղ եւ ինք կուզէ ապացուցանել որ, ինչպէս քաղաքականութեան, նոյնպէս կրօնի մէջ ալ շահն է գլխաւոր շարժառիթը:

Հայը Շարմբեան իր վտիտ փառքին ու տարտամ համբաւին վրայէն սպունգ մը կանցնէ, իր ձեռքով քանդելով իր շուրջը դիզուած հմայքի թեթեւ ամպերը:

Ֆրանսայի զթասրտութեան կոչ ընելու համար, թովիչի դերը կըստանձնէ սա լեզուն քանեցնելով.

„. . . Եթէ արդարութիւնը այսպէս ծանր եկաւ անոնց (հայոց) վրայ, զուցէ անոր համար է որ 15 դարէ իվեր հայերը կը յարատեւեն Եւդիքոսի, Նեստորականներն ալ Եփեսոսի ժողովին դատապարտած հերէտիկոսութիւններուն մէջ“...

„Երկնային շնորհը կը յուզէ անոնց սիրտը եւ այս բաժան հերիտիկոս եղբայրները վրդովատոյզ կուգան մեզի“...

„Կաթոլիկ զթասիրութիւնը (?!) անոնց օգնութեան թռչելով, ըրաւ ինչ որ քարոզը, հակաճառութիւնը անկարող եղան իրագործել այնքան դարեր: Վանէն եւ Բարձր Հայքէն 30,000 հայեր պաշտօնապէս կաթոլիկ արձանագրուած են: Պէտք է օգնել Յիսուս Քրիստոսի փարախը բերելու համար զանոնք“:

„Աստուածային նախախնամութեան զաղտնի ու խորհրդաւոր ճամբաները հասկանալի են այժմ որ թոյլ տուաւ որպէսզի բոլոր այս անպատմելի պատիժները թափին այս դժբախտ ժողովուրդներուն վրայ, զանոնք այսքան մոլորական դարերէ ետք, ճշմարիտ եկեղեցու ծոցը բերելու համար“...

Ինչպէս կը տեսնենք, հայը Շարմբեանի հոգին մեր մեղքերուն համար կը ճ ե ն ճ ե ր ի... Նարեկացիին հոգիին պէս. ինչոր երբեմն in petto (սրտծածուկ) էր, այժմ մերկապարանոց կը խօսի կաթոլիկ հայրը եւ կարծես կ'ուզէ զողնալ հայաստանի „բազմերախտ“ հայրապետին փառքը:

Վերջապէս հայը Շարմբեան, ամէն բանէն աւելի, նոյնիսկ երկնային շնորհներէն աւելի, իրեն յենակէտ ընտրած է փողը, որով նոր Արքիմէդէսը, կը յաւակնի տեղէն շարժել Հայաստանը եւ նետել պապութեան ծուլարանին մէջ, „եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ“:

Յետոյ... երբ կաթոլիկ ըլլանք, Ֆրանսան մեզ պիտի պաշտպանէ: Նոյնը կը հաւատէ նաեւ „պատկերապաշտ“ Ռուսիան. եթէ „պօժէ ցարիա խրանի“ երգենք, եթէ ռուսադաւան ըլլանք, պիտի ազատէ մեզ սուլթանի կարմիր ճիրաններէն: Ահա ինչոր զիշեր-ցերեկ կը փսփսան մեր ականջին օրթոդոքս եւ կաթոլիկ եկեղեցիները եւ մեր պատուհասները կը վերագրեն աստուածային սրտմտութեան, որ իր անհուն բարձրութենէն վար կ'իջնէ ազտիկ, խեղճ ժողովրդի մը զգաստութեան դասեր տալու համար: Այս է Շարմբեանի լեղի հեգնութեան եւ իր ճիգվիթութեան խեղճուկրակ փիլիսոփայութիւնը — paupertina philosophia:

Կրօնական վիճաբանութեան մտնելու սկսլաստիկ փ է հ լ ի վ ա ն ո ւ թ ի ւ ն չունինք բարեբախտաբար: Բայց քանի որ մենք կը մարտնչինք, պատմական ժողովրդի մը ազատութեան, մեծութեան եւ բարօրութեան համար, անպատշաճ չըլլար, եթէ երբեմն-երբեմն քաղաքական էնդրիվիներէն դուրս, կրօնական ածպարարութիւններուն վրայ ալ ուշ դարձնենք:

Հայաստանի կոտորածները առիթ եղան որ քաղաքական եւ կրօնական այդ երկու մեծ երեւոյթները, իրենց զոյնը դուրս տան: Կրօնը չկրցաւ երկնային անշահախնդրութիւն մը ցոյց տալ. օտար կղերները եղան այն արծիւները որոնք հոն կը ժողվին „ուր գէշն իցէ“: Մինչեւ իսկ մեր ծովածաւալ դըժբախտութեան հանդէպ ունեցան դժոխային խտրութիւններ, զատելով լուսաւորչական հայը կաթոլիկ կամ բողոքական հայէն: „Փոխեցէք կրօննիդ որ հաց չուր տանք ձեզի“, կը թքնէին նահատակ հայու երեսին:

Կրօնի այլանդակ խոշոր ծիծաղը:

Հայը Շարմբեան լաւ կ'ընէր իր զրիչը դժոխքը նետէր ու այդ սրտախոց տողերը չգրէր այնքան սինիք անիծաբանութիւնով մը եւ թոյլ տալ իրեն ըսել որ „Աստուած հայերը կը պատժէ ինչու որ հերիտիկոսներ են“: Ի՛նչ տափակ եւ անհամ մտքեր կան սա կղերականներուն մէջ, որոնք երկնքի, կրօնի անունով, մարդկային սրտի էն ազնիւ եւ սրբազան զգացումներուն չեն խնայեր եւ ոլքա՛ն գովելի պիտի ըլլար, եթէ մեր եկեղեցականները, քաղաքացիական առաքինութեան վրայ աւելի հզօր գաղափար ունենային, քան երկնային դժգոյն առաքինութեան վրայ:

Հայր Շարմբեան, իբր նախատինք մեր երեսին կը նետէ Եւդիքիան անունը: „Հայերը Եւդիքեան“ — ահա վերջին նորութիւնը:

Իսկապէս հաւատքի հարցերու մէջ լռելը ոսկի է, որովհետեւ ուրիշին սխալը փնտռել, սխալ մը սխալով հերքել ըսել պիտի

ըլլայ, կամ նոր սխալի մը մէջ գլորիլ, այսինքն անընդհատ պիտի բոլորինք „յոռի շրջանակի“ մը մէջ: Այսպէս չէ՞ն եղած բոլոր հաւատքի վիճաբանութիւնները, որոնք մարդկային մտքի մղձաւանջը եղած են: Պատմէ մեզի, ո՞վ „յաւիտենական քաղաք“:

Առանց մեր եկեղեցիին ոգիին դպելու (անոր պաշտպանութիւնը ծգելով մեր ցաւագար եկեղեցականութեան), կարելի է երկու խօսք ըսել Եւդիքէսի մասին: Եւդիքէս իր դարուն էն մեծ եւ պարկեշտ եկեղեցականը եղած է գրեթէ, թէեւ Քաղկեդոնի աւազակներու ժողովէն դատապարտուած ըլլայ: Ն՚ընդունի որ Քրիստոս մինակ աստուածային բնութիւն ունի: Եթէ, ղորդ որ, Քրիստոս աստուած եւ իր կրօնը երկնային ընդունինք, Քրիստոս մաքուր աստուածային զուտ երեւոյթ մը ըլլալու է. ակէց ոչինչ մնաս կուգայ մարդկային ազգին եթէ խելքի մօտ քան ըլլայ, բայց երկու բնութիւն դնելը, կեղծիքի պաշտպանութեան տակ ապաստանիլ է: Ենթադրենք որ հնար ըլլար կենդանիներուն կրօն սորվեցնել, վստահ եղիք որ նրբամիտ եւ հրեշտակային աստուածաբանները չպիտի տնտնային ըսելու թէ Քրիստոս աստուածային, մարդկային եւ անասնային բնութիւն ունէր:

Այս պառատօքսը տեղի տուաւ վերջերս մեզի դէմ արձակուած այդ սմսեղուկ, տգէտ միշնադարեան ամբաստանութեան ձեւը, որով հայերս իբր Եւդիքեան մոլար վարդապետութեան հետեւող՝ հերիտիկոս, պիղծ եւ մարդկութեան ոլորտէն դուրս նետուած կը համարուինք: Շատ տխուր է քանեբորդ դարու մէջ տեսնել Շարմբթաններ, շարլաթաններ, որոնք գլուխնուն զօր կուտան, խաւար դարերու մղձաւանջը վերարծարծելու համար: Քերթէ ամէն օտար կաթոլիկ տակէն ճիգպիթ մը կ՚ելլէ:

Միթէ՞ Փրանսացիք չէին մեղքնար, եթէ ըսէր որ հայերը քրիստոնեաներ են, այնքան լաւ քրիստոնեայ, որ Խաչակրութիւններուն մեծ ծառայութիւններ ըրին եւ նոյնիսկ իրենց փոքրիկ թագաւորութիւնը վրայ տուին, քրիստոնեայ քանակներուն օգնելուն համար: Տգէտ եւ անվայել զէնքեր են ըսել թէ անոնք Եւդիքեան հերիտիկոսներ են: Դարտակ զէնուգրաներ՝ թանգարաններու մէջ ցոյց դուրելու համար միայն:

Բայց Շարմբթան այսքան սպասելէ վերջ կը տեսնէ որ հայ ժողովուրդը շատ կարօտ է, իր մտքի խելագարուհին, կը կարծէ զտած ըլլալ „հոգեբանական վայրկեանը“ դէն շալդելու համար անկեղծութեան թոյը, սովատանջ ժողովրդի աչքին կաթոլիկ ոսկիները շողացնելով:

Հայր Շարմբթան գուցէ կ՚ուզէ խաղալ կարդինալ Լավիժըրիի դերը: Լավիժըրի Ափրիկէի մէջ „մերմակ հայրերու“ բանակով կ՚ուզէր սեւամորթ Ափրիկէն քրիստոնէացնել. իրաւ է մեծ դեր խաղաց եւ Փրանսայի քաղաքականութիւնը մեծապէս օգուտցաւ անոր առաքելութենէն, այնպէս որ միականի Կամպէթթան, մեծագոյն թշնամին կղերականութեան, բացագանչեց. „կղերականութիւնը արտածելի ապրանք չէ“. բայց Լավիժըրին իր յաջողութեան հետ ունեցաւ եւ անապատի պատրանքը:

Վերապատուելի հայրը եթէ կ՚ուզէ որ արեւելեան քրիստոնեաները պապութեան „փարախը“ մտնեն, urbi et orbi թշնամանելով ու „աստուծոյ վրէժխնդրութիւնը“ հայցելով չէ որ պիտի յաջողի, ոչ ալ Վատիկանի շանթերը: Ազնիւ հայրը գուցէ շար չի նիւթեր մեր դէմ եւ իր իրօք „քարի սրտէ մը կը բղխի“ ըսեր է Լաֆոնթէն... Բայց...

Ի՞նչ կը խոստանայ տալ մեզի եթէ կաթոլիկ ըլլանք: 20 դար պապութիւնը քալեց ու գործեց յաւիտենականին առջեւ, խոժոռ ու մռայլ, մարդատեաց եւ ահեղասաստ, բանադրանքի շանը ափին մէջ, փոխանակ լուսաւորութեան ջահին: Պապական անսխալականութիւնը մեզ չի փրկեր եւ գիտենք թէ պապը եթէ մեղքերը „կապելու ու արձկելու“ աստուածային հեղինակութիւնը ունի, միջազգային քաղաքականութեան մէջ արհամարելի քանակութիւն մը եղած է: Բաբեբախտաբար, այսօր ամէն ճամբայ հոռմ չի տանիր: Մենք ժողովուրդ մըն ենք եւ կը սիրենք ճանչնալ որ մեր կաթողիկոսը սխալական է, հոդածին է, երբեմն հափազանց բացքերան, եւ չենք թաշիր անոր սխալութիւնները մատնանիշ ընել. իրաւ է թէ մեր մէջ ալ ծիգեր եղան տամնաբանելու համար ազգին, ամպոյական թէօրիներով, թէ մեր կաթողիկոսը անսխալ է, ամբասիր է, արդէն ազգին շմոռածը ան կը խորտի Խորէն էֆէնտիին հետ:

Վերջապէս, ինչպէս քաղաքականութեան նոյնպէս եկեղեցիին մէջ, փոխանակ այդ տեսակ „լեզուի հիւանդութիւններու“, որոշ փափկանկատութիւն մը, քաղաքավարութիւն մը կենալու է: Հայր Շարմբթան պէտք չէր այդքան ցուրտ եւ աշխարհիկ հարախնդացութիւն դնէր իր ցնծութեան մէջ. հայկական պատուհասները աստուածային նկատելով, գոհունակ անգիտակցութիւնով մը կ՚արդարացնէ արդէն համիդը որ ուրիշ քան չէ բայց եթէ Եհովայի „արդարութեան քաղուկը“ որ կուրօրէն կը զարնէ պապութեան ամէնամեծ փառքին հմմաբ. Թարծես մեր ականջին կուգայ միշտ դարու սա հարափար պատգամը. „Զարկէք. Աստուած իրենները կը ճանչնայ“:

Արդեօք հանօթոյի Փրանսան խաղա՞ց այդ տեսակ դեր մը, սուլթանի քաղուկը գինելով, որպէսզի հայերը զղջահար ս. Պետրոսի աթոռին դառնան:

Հայր Շարմբթանի արիւնոտուշտ „տէր զօրութեանցը“ մեզի համար սփոփիչ ոչինչ ունի եւ ոչինչ յուսանշոյլ պապականութիւնը ընդունելուս մէջ: Եթէ ազգերու յիշողութիւնը չըլլար, Շարմբթանի երազը, իրոփափաքը բոպէական հարցեր էին: Սպանիան ամէնակաթոլիկ երկիրը, որու տիրապետութեան վրայէն արեւը մարը չէր մտնէր, մոխիր ցանած է այսօր գլխուն վրայ ու գիշերը ցերեկին խառնելով չի կրնար իր սեւ ճակատագրին դարման մը գտնել. մոմիաի պէս այնքան փաթթուած կը զգայ սըրբազան քահանայապետին օրհնութեան կապանքներով: Սպանիացի մեծ հայրենասէրը, Քաստէլար, մեռած պահուն, խորին սրտցաւով մը կըսէր՝ „Սպանիոյ տագնապէն կը մեռնիմ“: Դարձենք աչքերնիս ամէն կողմ, պատմութեան Նեմէսիսը շատ անգութ եւ անողոք դատախազ մըն է կաթոլիկութեան հանդէպ:

Շարմբթան կը ճգնի մեր գլխուն փաթթել կրօն մը, որ ստեղծեց հաւատաքննութիւնը, որ ստեղծեց քանադրանքը, որ խաչակրութիւն քարոզեց մտքի ազատութեան դէմ, որ ազատութեան թաղումն իսկ երազեց եւ... սուտ արցունք թափեց Հայաստանի կոտորածներուն վրայ: Ապագային Kulturkampf (քաղաքակրթակռիւ) մը չենք ուզեր այժմէն քեղմնաւորիլ, նոյնիսկ եթէ պապը Եզեկիէլի տեսիլքը ունենայ Հայաստանի գերեզմաններուն վրայ:

Փրանսան, դժբախտ Փրանսան, եթէ կրօնի համար մեզ պիտի պաշտպանէ՝ ըսել է շունի դեռ քաղաքական ամուր խարիսխ: Մենք տեսանք յաճախ, Փրանսայի հանրապետութիւնը իր անծնապատութեան մօտիկ շահերն ալ չհրցաւ պաշտպանել. ան միշտ տեղի կուտայ Արեւելքի մէջ, ծգելով որ կղերական Ֆանթօշները, իր շիջելափառ անցեալին իբր ուրուականներ, Փրանսայի աւերակ երազներուն վրայ Ave Maria օրհնաբանեն:

Մարդկային քաղաքագործութեան մէջ շաղուել այդ տեսակ միտքեր, անօթիին հաց տալ երբ կաթոլիկ ըլլայ, ծուռ նայիլ ան թշուառին որ պապին անունը չի գիտեր, դեւտացիին պէս անցնիլ ինկած հայ վիրաւորին քովէն, ահա ինչ որ կը հետեւցնենք հայր Շարմբթանի ոխսիրտ յօդուածէն:

Ցաւալի է այդքան ժպրոտութիւնը կարգ մը կրօնի պաշտօնեաներուն որոնք աջ ու ձախ չեն խնայեր դատափետել, հայհոյել դժբախտ ժողովրդի մը դարաւոր զգացումներուն, կրօնքին, յանուն պապութեան, որ մարդկութեան մէջ կրօնի բարբարոսութիւնը հիմնեց:

Հայաստանի նոյի աղաւնիները վերջվերջը ագռաւներու կը կերպարանափոխուին: Հայր Շարմբթանի որդեգրած մէթոտը, հայ եկեղեցին պապութեան մէջ հալեցնելու համար, սիրուն եւ մարդկային չէ. արիւնի արտերուն մէջ հաշտութեան ծաղիկ չի բուսնիր, երբ մանաւանդ անոր վրայէն փարիսեցիութեան շունչը կը փչէ:

Հայաստանը, իրաւ է մեծ է իր դժբախտութիւններով, բայց մարդկային զգացումի դէմ ոճիր մըն է շահագործել այդ դըժբախտութիւնը, միայն յիշեցնենք ճակատագրի վրէժխնդրութեան զոհ այդ փոքրիկ երկիրը, ամբողջ Ասիոյ մէջ քրիստոնէութեան boulevard եղած է. այդքանը բաւ է որ պապական ամբարտաւանութիւնը յարգէ ճշմարտապէս „քրիստոնեայ երկիրը“, ինչպէս է Հայաստանը՝ որուն դէմ այսօր անքարեխղճօրէն խաչակրութիւն կը քարոզեն:

Մարդասիրութիւնը, այդ տիեզերական կրօնը, չշփոթենք կրօնի փառասիրական ձգտումներուն հետ: Փրանսայի գերակշռութիւնը՝ ատոր մէջ չէ. հայ ազգը դրական ծառայութիւն կրնայասէ Փրանսայէն, որը սիրելու համար կաթոլիկ կղերէն դաս չենք առներ. երբ կաթոլիկ ըլլայ հայ ժողովուրդը... գուցէ ատէ զայն, զի տօմինիկեան հայրերը պիտի ծածկեն մեր աչքէն ճշմարիտ Փրանսան, մեզի փուք մոս կերցնելով:

Սպասենք մինչեւ որ, Լուպէի իմթիազի թանկագին շքանշանէն ետքը, սուլթան համիդ, հայր Շարմբթանին ալ խաչ մը դրկէ եւ պապին ալ սուղ նոր մատնի մը:

Հայր Շարմբթան գինովութենէ Նոյի մերկութիւնը ունի. մեզի, հերիտիկոսներուս կը մնայ խնդալ այդ մարդուն վրայ, որուն աչքերը աւելի ոսկեփայլ են քան գթափայլ:

Եւ իրաւ որ, աստուածային նախախնամութեան զաղտնի ու խորհրդաւոր ճամբաները հասկանալի են այժմ... ինչու որ թոյլ տուաւ որպէսզի հայր Շարմբթանի հացէին ըսենք.

Ցոյսէն յետոյ տխրութիւն:

ԹԵՐԹՕՆ

ՄՇԵՑԻ ԿԱՐԻՆԷ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ *)

Նուէր հայ կանանց եւ օրիորդներին

I

Մութ գիշեր է։

Լուսինը՝ վշտացած այս գիշերուայ սոսկալի ոճիրից՝ մթագնած ամպերի ետև պահուել էր սգաւորի պէս։ Երբեմն միայն դուրս էր հանում թախծալի դէմքը, նայում Մշոյ սքանչելի, բայց տխրամած դաշտի վրայ, և իր գալուկ շողերով լուսաւորում Արածանու արնոտ ալիքները, Մեծն Սահակ Պարթեւի ու Վահան Մամիկոնեանի շիրիմները... և նորից սուզւում մռայլ, սև ամպերի ետևում։

Գիշերային մթութեան մէջ հրդեհի կարմիր բոցերը օձի նման գալարւելով բարձրանում էին երկինք և լուսաւորում հորիզոնը։ Մուշի գիւղերը պատած էին թանձր ծխով։ Ագահ կրակը լափում, այրում էր դէզեր, տներ, կենդանիներ և մարդիկ։ Գիշերային այս կասկածելի շփոթութեան միջից՝ հեռու-հեռու տարածւում էին խուլ հառաչանքներ, դառն ողբ ու կոծեր...

Գիւղերի մէջ յուսահատական, կեանքի և մահւան կռիւ էր տեղի ունենում։ Մարդիկ ոլոր-մոլոր փողոցներից փախչում, հեւալով պատերը ճանկռտում, վեր էին բարձրանում, վար իջնում և մթութեան մէջ անյայտանում...

Մարդիկ ահ ու սարսափով փախչում էին և գազան-մարդիկ նրանց կատաղաբար հալածում։ Պատերի տակ, փլատակների մէջ հայ գիւղացիները գետին փռւած՝ արեան լճակի մէջ կծկւում, գալարւում և իրենց վերջին շունչն էին փչում։ Նոյն գազան-մարդիկ յղի կանանց փորերը պատռում, դեռ լոյս աշխարհ չ'եկած անմեղ մանուկներին շպրտում էին օդի մէջ և սրերը դէմ բռնելով՝ կիսում կամ սրի ծայրն էին անցկացնում... Կարծես անարգ մահն այս եղերական գիշերը իւր թեւերը տարածել էր ամբողջ դաշտի վրայ և ուզում էր՝ համարձակ թագաւորել։

Բայց ո՞վքեր էին այդ գազան-մարդիկ. ո՞ւմն էր այն գարշելի, պիղծ ձեռքը, որ առանց գթալու աւերում էր այդ աստուածային հոյակապ շէնքը, Մշոյ սիրուն դաշտը։

Մահմէտականն էր նա, նրա անարգ ձեռքը։ Մահմէտական խուժան—այդ ասել է մի նեխած, հոտած մարմին, որից գարշահոտութիւն է բուրում և վարակում իր շուրջը գտնւած ամէն բան։ Նա աւելի վատ է քան ժանտախտը։ Նա չի ընդունում նորոգութիւն, թարմութիւն, այլ միշտ շարունակում է նեխել։ Նա միշտ ուտում, մաշում է իրեն, բայց աւելի շատ իր թշւառ հպատակներին։ Գիշերային խուժան-հրոսակները այժմեան մահմէտականների պապերն էին, որոնք իրենց գազանային յատկութիւնը իբրև ժառանգութիւն թողին այժմեան սերունդին էլ։

Եւ այն օրերից մինչև այժմ, այս վայրկեան՝ հայ մանուկը դեռ երերում է մահմէտականի սրի ծայրին։ Եւ այն օրերից մինչև այժմ, այս վայրկեան՝ հայը խողխողւում է իր հարազատ հողի վրայ և արեան մէջ ծփում... Ո՞ւր էք, յանդուգն հայ սրտե՛ր. մի՞թէ դժոխային կեանքը մեզ չհասկացրեց, թէ լաւ է քաջի մահով մեռնել, քան խայտառակ, ամօթ բերող մահով...

II

Մինչ այս անգութ կոտորածը շարունակւում էր, մինչ հայաշատ գիւղերը լափող բոցերից ճարճատում էին, Ն... գիւղում մի անսովոր տեսարան էր պատկերանում։

Գիւղական պարզ և ցածրիկ տան բակում մի դեռահաս կին կռւի էր բռնւած մահմէտականների հետ։ Մշեցի Կարինէն էր այդ։ Նա այդ ընդհանուր աղէտի ժամանակ ամէն տեղ էր, և՛ տանիքների վրայ, և՛ նեղլիկ փողոցներում ու այգիներում, և՛ ճարճատող փլատակների մէջ, և՛ գիւղից դուրս։ Կարինէն ուր հասնում, խրախուսում, ոգի էր ներշնչում իր համագիւղացիներին, թոյլ և վախկոտներին յանդիմանում էր։

Վտանգի տեղերում նրա մետաղեայ սուր ձայնը հընչում էր. „Զարկեցէք, մի՛ վախենաք, դիմադրեցէ՛ք“... Նա ինքը կռւում էր ամէն բանով՝ քարով, փայտով. բայց իր պապենական ժանգոտած սուրն էլ անբաժան էր նրանից։ Մահմէտականները Կարինէի պատճառով մեծ դիմադրութեան հանդիպեցան։ Չէր յաջողւում այդ գիւղն ևս ուրիշ գիւղերի նման դիւրութեամբ աւերել ու թալանել։ Իրենցից բաւականին մարդիկ ընկան. ստիպւած գաղտնի մարդ ուղարկեցին մի խումբ ևս օգնութեան կանչելու։ Նրանք վերջապէս ճանաչեցին մեղաւորին և ատամները կրճտացնելով՝ ամէն տեղ որոնում էին „դև կնոջը“։

Ահա Կարինէն երկու այդպիսի ոսոխների է հանդիպում՝ յանկարծակի մի խուլ տեղում։

Նրա գլխի ծածկոցը պոկած էին, հերարձակ էր։ Նրա թուխ մազերը առատօրէն թափւած էին ուսերի վրայ և ծածկելով վայելուչ թիկունքը, իջնում էին մինչև գօտին. սև աչքերը վառւում էին վրէժխնդրութեամբ, և ներդաշնակելով նրա դէմքի կանոնաւոր գծերին, մի առանձին գեղեցկութիւն էին տալիս նրան։

Թշնամիներն ամէն կերպ աշխատում էին ողջ բռնել „դև կնոջը“, բայց հէնց առաջին յարձակման ժամանակ Կարինէն մի այնպիսի ծանր հարւած տւեց նրանցից մէկին, որ թիւրքը վայրկենապէս անշընչացած՝ գետին փռւեց։ Զայրացաւ, կատաղեց ընկերը մի թոյլ կնոջ յանդգնութեան վրայ և մոռացաւ կենդանի բռնելու ամէն ցանկութիւն։ Մահառիթ սուրը շողշողում էր գեղջկուհու գլխին։ Մահը մօտ էր, նրա շուրջն էր։ Այդ լաւ էր զգում յոգնած Կարինէն, բայց այն պաշտելի գաղափարը, թէ քաջի մահով մեռնել և չընկնել պիղծերի ձեռքը, այդ թուլացած, անճար վիճակի մէջ նրան յաղթողի ոգի էր ներշնչում։ Թշնամին երկրորդ անգամ և աւելի կատաղի յարձակւեց։ Գեղջկուհին մի սոսկալի

---

*) Ներկայ վէպիկը պատկանում է մեր ընկեր՝ ՊԵՏՕ-ի գրչին,—նա, որ երկար տարիներ, իբրեւ յեղափոխական, Վասպուրականում գործելով. Վանի կռւից յետոյ՝ նահատակւեց Թիւրք-պարսկական սահմանի վրայ 1896 թւի յունիսին (տես „Դրօշակ“, թիւ 22, 1896)։ Գրական այս փորձը, որ միաժամանակ հեղինակի զգայմունքների զեղումն է, պէտք է համարել կռւի դաշտում ընկած յեղափոխականի հայրենասիրական մի բողոք, որ անկասկած նոր արձագանք կը գտնի Գարահիսարի լեռան հերոսի գաղափարակիցների սրտում։

ձայն արձակեց. նա վիրաւորուեցաւ, շփոթուեց և ինքնիրեն կորցրեց։

Մի վայրկեան ևս, և նա մահմէտականի գրկում պիտի լինէր. սակայն իսկոյն սթափուեց, ուժգին յետ հրեց իրեն բռնող ձեռքերը, վերկացաւ, մի պտոյտ գործեց նեղ բակի մէջ և իբրև անապատի կատաղի վագր՝ թռաւ իր թշնամու վրայ։ Մահմէտականը մոնչեց և ընկաւ։

Արիւնքամ եղած Կարինէն արդէն անհետացել էր մթութեան մէջ...

Կամաց-կամաց հրդեհները մարում էին։ Երբեմն-երբեմն լսւում էր մեռնողների և գերուածների ցաւալի հառաչները։ Տեղ-տեղ խոտերն ու թփերը խշխշում էին և գողունի, ընդհատուող ոտնաձայներ էին լսւում։ Դրանք մահից փախչողներն էին։

Մահմէտականները նոյն հաւատի լէշակեր քիւրդերի հետ բարձում էին իրենց հարուստ աւարը։ Նրանք շատ էին շտապում. չլինի՞ խաւարի որդիքը ամաչում էին պայծառ արեգակից։

Երկինքն այս բոլորը տեսնում էր և քարացած էր. իսկ խոնարհ լուսինը բաւականանում էր տխրութեամբ փետրային ամպերի մէջ սահել։ Եւ իրաւունք ունէին այդ երկու լուռ վկաները։ Նրանք իրենց պաշտօնը կատարում էին ամենայն սրբութեամբ։ Հա՛յը, միայն հա՛յը հաւատարիմ չէր իւր անձին, գոյութեանը։ Մոռացկոտ և շուտ հաշտուող հայը վախկոտութեամբ ծախում էր և դեռ ծախում է իր անձը, սիրելի ամուսնուն, զաւակների պատիւը, իր անձեռնմխելի իրաւունքները, և այդ բոլորը միմիայն նրա համար, որ նա վիզը թեքած, գլուխը խոնարհած կուրծքի վրայ, մի քանի օր, մի անորոշ ժամանակ աւելի ապրի, ստորաքարշ սողունի նման քաշկըռտուի, ամէնքին և ամէն դէպքում խոնարհուի և զիջանի, մինչև որ մաշած, ուժասպառ՝ գրկէ ցուրտ դերեզման...

III

Արշալոյսը բացւում էր։ Լեռների և ծաղկապատ հովիտների վրայ քնքոյշ քօղի նման ծաւալուած մառախուղը բարձրանում էր։ Արևելքում կուտակուած ամպերը կլանելով արևի առաջին ճառագայթները՝ մոյգ արեան գոյն էին ստացել, որ շատ էր նմանւում Մշոյ դաշտի ողբալի տեսարանին։

Ն... գիւղից մի փոքր հեռու, առաւօտեան մշուշի միջից մի ստուեր էր երևում։ Նա շտապով առաջ էր շարժւում և անդադար ետ ու առաջ նայում. երբեմն կանգ էր առնում, ականջ անում՝ և էլի յուզուած ու անհանգիստ՝ շարունակում իր ճանապարհը նեղ ձորակով։ Կուրծքին սեղմած էր մի փոքր երեխայ։ Այդ Կարինէն էր իւր փոքրիկ աղջկայ հետ։ Ցաղող բոպէ գտնելով, իր ետև ձգած տասնեակ լրտեսներից խոյս տուած՝ փախչում էր։ Նա փախչում էր պատուով մեռնելու համար։ Թիւրքերի պահանջած օգնութիւնը հասել էր, գիւղացիները վախից այլևս չէին դիմադրել. գիւղն աւերել էին բարբարոսները։

Հրոսակապետը խիստ գայրացած՝ խումբեր դուրս ձգեց գիւղի մէջ, այգիները և գիւղի շրջակայքը. ամէն տեղ որոնում էին „դև կնոջը“ և ով ձերբակալէր՝ ողջ պիտի տանէր հրոսակապետի մօտ ու պարգև ստանար։

Փախստականն ապաւինում էր իրենց սահմանի մօտակայ լեռները, որոնք պատած էին մացառով։

Հազիւ կէս ժամ էր մնացել, բայց նրա ոտքերն այլևս չէին հնազանդւում. ծնկները ծալւում էին։ Ամբողջ գիշեր ոտքի վրայ, արիւնքամ, երեխայի ծանրութիւնը և հալածողների սարսափը—այս բոլորը մաշել, ուժասպառ էին արել թշուառ փախստականին։

Կարինէն զգուշութեամբ չորս կողմը դիտեց, դուրս եկաւ ձորակից և վայրի մացառների միջից սողալով, փոքրիկ բլրի քարերի մէջ՝ խոտի վրայ յոգնած նստեց։ Նա սեղմել էր կրծքին իր փոքրիկ աղջկան, որ յուզուած՝ կարծես զգում էր, որ մի վատ բան է կատարուելու...

Կարինէն թախծութեամբ նայում էր չորս կողմը։ Մօտից վազում էր՝ քարից քար թռչելով ու փրփրալով՝ իրենց գիւղի առուակը։

Գեղջկուհու կեանքը մանուկ հասակից կապուած էր այդ վճիտ ջրի հետ, որն անցեալից շատ բաներ զարթեցրեց նրա մէջ։ Ոտքերի տակ ձգւում էր դալարով ծածկուած դաշտը, որի մէջտեղը նստած էր իր հայրենի գիւղը։ Այնտեղ էր ծնուել և մեծացել նա։ Այնտեղ էին իր հայրենի տնակը, ազգականներն ու բարեկամները, գեղեցիկ այգին ու արտերը։ Այնտեղ էր վերջապէս իր սիրելու անթաղ դիակը։

Ետևի կողմում տարածւում էին հովաշունչ լեռները։ Երևակայութեան մէջ դեռ լսում էր կովերի բառաչը, գառնուկների մայիւնը, յիշում էր թէ ինչպէս ճիճաղխալով ոչխար ու կով էր կթում և առատ իւղ ու պանիր պատրաստում տան համար։

Ծանր աշխատանքից յետոյ, այդ լեռնային վայրերում շատ անգամ մասնակցել էր աղջիկների պարերին ու երգերին, որ միշտ տեղի էր ունենում ամառուայ անուշ, լուսնկայ գիշերները։

Բոլորը, այս բոլորը մանկական ու երիտասարդական քաղցր յիշողութիւններով կապուած էր Կարինէի սրտի հետ մի ամուր կապով։ Եւ դուցէ այս բոպէիս, մի ժամից՝ այդ բոլորից պիտի զրկուէր, սուրբ կապը գազանների ձեռքով պիտի խզուէր... Կարինէն այլևս չդիմացաւ և հեկեկաց... Նրա աչքերից դուրս էին թռչում արտասուքի խոշոր կաթիլները և գլորւում ցած։ Երկար հեկեկում էր նա իր զաւակի հետ՝ խեղդուած ձայնով։ Դառն էր այդ կոծը և սիրտ այրող...

Մի փոքր հանգստանալուց յետոյ՝ վերջին անգամ սիրալիր հայեացք ձգեց Կարինէն այնչափ սիրած հայրենիքի վրայ և վերջին հրաժեշտը տուեց.

„Մնաք բարո՛վ, հայրենի տնակ և սիրելուս անթաղ դիակ։ Մնաք բարո՛վ, ոսկեհեր արտեր, ծաղկաւէտ արօտներ ու սառնորակ ջրեր։ Մնաս բարո՛վ, սիրուն Մշոյ դաշտ, ի՛մ խանձարուր, մանկութեանս որրան, և դուք, ո՛վ անմեղ զոհեր“...

Նա դեռ հեծկլտում էր, երբ տեղից վերկացաւ ու երեխային առաւ գիրկը։ Բայց դեռ առաջին քայլը չփոխած՝ յանկարծ նա մի սուր ձայն արձակեց ու սկսեց վազել։

Հեռու, ճանապարհի վրայ, բարձրանում էր սի՛նաձև փոշի։ Մի խումբ ձիաւորներ սրարշաւ գալիս էին։ Կարինէի հետքը բռնուած էր։

IV

Գեղջկուհին հեւալով բոկոտն յառաջ էր վազում։ Մահուան տագնապը տիրել էր նրան։ Չէր նայում ոչ փշի և ոչ քարի։ Ոտքերը պատռուել էին և արիւն էր հոսում, բայց նա խոտեր բռնելով, քարեր ճանկրռ-

տելով՝ լեռան ստորոտից բարձրանում էր։ Երբեմն սրբելով՝ զառիվայրից ցած էր գլորում և իր կամքի հակառակ աղմուկ հանում։ Վերջապես քրտինքի մեջ շաղախված՝ հազիւ հազ իրեն ձգեց մացառի մեջ և այնտեղ թագնուեց։

Շատ ուշ էր, որովհետև հրոսակների խումբը մօտ էր և ամէն բան դիտում էր։ Հէնց այդ րոպէին Կարինէն լսեց ձիերի խրխնջոցը։

— Ա՜հ, բացականչեց նա. կորա՜ւ թագնելու յոյսս։

Նա թողեց մացառը։ Իւր գիտցած հեղեղատներով ու փոքրիկ սարահարթերով ծածուկ բարձրացաւ և մագլցելով անանցանելի այծեամների շաւիղներով ու անդունդների եզերքներով՝ ամրացաւ մի մեծ ժայռի տակ, խոր անդունդի եզերքին։

Արդար վրէժխնդրութիւնը, մեծ վտանգները, մանաւանդ մի անբախտ ազգի սէրը շատ անգամ ամենաթոյլ էակին անհաւատալի հերոսութիւններ են անել տալիս։

Գեղջկուհու շփոթութիւնը կամաց-կամաց անցնում էր. նրա սիրտը պնդուեց և անվախ էր։ Կարինէն պարզ նախազգում էր, որ իր ծաղիկ կեանքի վերջին ժամը պիտի հնչէ և աղօթք էր մրմնջում... Վերջին փափագն էր՝ պատուով մեռնել։ „Հարե՞մ... կամ պիղծերի ձեռքով մեռնե՞լ“... այս հարցերի առաջ մահուան սարսուռ էր անցնում նրա ամբողջ մարմնով։

Մահմէտականները արդէն ցրուած էին մացառի և լեռան վրայ ու տենդով որոնում էին։

Ցանկարծ քարերի և աւազի շառաչ լսեց Կարինէն։ Դողալով, նա զգոյշ ոտքի ելաւ։

— Ա՜հ, Աստուած իմ, տո՛ւր, տո՛ւր իմ թոյլ բազկիս զօրութիւն։

Մարդորսը մի քանի քայլ հեռու, ժայռերը մագլցելով, յառաջանում էր։ Կինը կանգնելուն պէս՝ նա տեսաւ և իսկոյն ետ-ետ գնալով ձայն տուեց ընկերներին։

Իրարանցումը տարածուեց, և բոլորը մի առանձին աղմուկով ու լիրը հրճւանքներով շտապում էին դէպի Կարինէն։

— „Իմ անմեղ հրեշտակս և սրտիս միակ մխիթարանք, դարձաւ հալածականը իր փոքրիկ աղջկան, — ծանր երկունքով ես քեզ ծնայ, սնուցի կուրծքիս վրայ, հսկեցի քեզ անքուն և հիանում էի քո մանկական առաջին ժպիտով. իսկ հիմա, հիմա՛, նոյն հարազատ մայրդ... քո անմեղ արիւնը պիտի թափէ... Այո՛, զաւակս, դու չպիտի ընկնես մահմէտականների ձեռքը։ Թո՛ղ, թո՛ղ որ քո անմեղ արիւնը բողոքէ այսչափ հալածանքների և կուտակուած թշւառութիւնների համար... Անշուշտ կը ներէ ինձ Աստուածն“...

Այսպէս ասելով, դառն արտասուքների մէջ, նա անվերջ համբուրում էր իր անբախտ աղջկան, որ դողում էր գազան մարդկութեան պատրաստած արհաւիրքից և իր հայցող ու թրջած աչքերը չէր հեռացնում յուզուած մօր երեսից...

Անարգ որսորդները սողկում էին շարունակ մամռապատ քարերի երեսով և անդադար յառաջանում, որ մի վայրկեան աւելի շուտ ձեռք բերեն այդ լեռնային գեղեցիկ որսը։ Նրանց մերկացրած սրերը դիպչում էին քարերին և շառաչ հանում։ Ախտաբորբոք, Ճպռոտ ու պլշած աչքերով այդ զզուելի արարածները՝ խումբերով ու զինուած թափւում են ու միշտ թափւել են անզէն և անմեղ էակների վրայ, առանց ամօթի, ճիշդ այնպէս, ինչպէս հիմա, մեր՝ օրերում, անում են նրանց ժառանգները մեր մայր հայրենիքի բոլոր մասերում — ամբողջ Տաճկա-Հայաստանում...

— Ո՜վ դու նզովից արմատ, „դև աղջիկ“, հիմա ո՞ւր պիտի փախչես ձեռքիցս. չէ, չէ, անհաւատի որդի, այժմ իմ բռիս մէջն ես, — գոռաց հրոսակապետը։

Կարինէի մէջ վառուեց ինքնապաշտպանութեան սուրբ և վեհ զգացմունքը։ Նրա դէմքը շառագունուեց. շրթունքները դողդողում էին, կուրծքը ալեկոծւում, կարծես ուզում էր պատռուել ու կրակ դառնալ՝ թափուել վատերի գլխին։ Նա որոտաց հպարտութեամբ.

— Գարշելի՛ն ե՛ր, դուք իմ անշունչ դիակին միայն կարող էք տիրանալ... Եւ ձեռքին ամուր բռնած սուրը ամենայն կատաղութեամբ ցցեց մի թիւրքի կուրծքը, որ արդէն մօտեցել էր նրան։ Մի րոպէ ևս ու Կարինէն ազատուած էր։ Բայց ահա վերից և վարից բոլոր թիւրքերը գոռալով վրայ թափւեցան։ Երեխան սիրտ կտրատող ճիչ արձակեց, երերաց ու ընկաւ։ Մօր սուրը ցցուած էր նրա սրտում։ Կարինէն կատաղի առիւծի նման դուրս թռաւ թիւրքերի միջից, ցատկեց ժայռի վրայ, երեսը խաչակնքեց և նետուեցաւ անդունդը... Օրհասական աղաղակը մի խուլ արձագանք տուեց, և ամէն բան լռեց...

Արեգակն արդէն բարձրացել էր և երկուսն պէս իր շողշողուն ճառագայթները առատութեամբ թափում էր Մշոյ դաշտի վրայ։ Բայց այսօր չէն տների, աշխոյժ գիւղացիների և կանաչ արտերի փոխարէն՝ նա լուսաւորում էր արդէն գիւղերի աւերակները, մարդկանց և երեխաների դիակներ ու մոխրի անվերջ կոյտեր...

ՊԵՏՈ

1893 ապրիլ 5
ՎԱՆ

ՄԱՀԳՈՅԺ

ԿԱՐՕ

(Մ. Ն.)

Վ—պ քաղաքին մէջ հողին յանձնուեց տեղական խմբերու ամենէն եռանդուն անդամներէն մին — ԿԱՐՕՆ։ Հնայելով իր 22 տարեկան երիտասարդ հասակին, նա իր շրջանի ոգին ու միացնող տարրը կը կազմէր։ Աշխոյժ և վերին աստիճանի կենդանի բնաւորութեան տէր, իր բազուկներին ծանր չէին գար յեղափոխական գործերը։ Թոքախտը սակայն շուտով խլեց մեզմէ մեր թանկագին ընկերը, որուն մահով Վ—պ ընդմիշտ կը զրկուի իր ապագայ հերոսներէն մէկէն։

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Ապառաժից 100 ռուբլի, Ճամբորդից 20, Շամ-ից 57, Վլ.-ից 103 եւ 47, Աւետիսից 150, Օսինկ-ից 10, Կարմիր քաղաքից 400, Վրէժից 46. 75 (№ 64-ով), Այգեստանից 500, Վոլգայի ափերից — Հէրքեզ հայի կողմից հանգանակւած — 100 եւ 32. 60, „Սմամ“-ից 100, Խարթուեթից 100 ռուբլի։ Գումար 1766 ռուբլի 35 կոպ.։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ՝

Ամերիկայի Հուլ քաղաքէն՝ Գ. եւ Ղ. 5 շիլին։ Ցիւրիխէն՝

Ի. եւ Ա. 6 ֆրանք, Աբ. Համ: 10 ֆր.: Քոստանձայէն՝ Ա-տաղձագործ 11 ֆր., Մ. Գ. Վ. 6, Ա. Մ. 3, Ց. Ք. 3, Ց. Ց. Ճ. 1 ֆր. — Կրինիչէն՝ Ե. Ե. 3 շիլլին: — Ոմն 4 ֆր. — Եկեղեցիէն՝ 400 ֆր. Անվէրսէն՝ Մոմ 5 ֆր. — Պարիզէն՝ Մ. Ց. 50 ֆր. — Ոսկանապատէն՝ „Բողոք" խումբ 794 ֆր. — Սուլթինայի „Դաշնակցական" խմբէն 30 ֆր. — Ս. Պ. քաղաքէն՝ 350 ֆր.: Լօրէնսի Կոմիտէէն՝ 154 ֆրանկ 50 սանթ., Եկեղեցիէն 265. ֆր. 15, ս., Ենա Պ. Պ.-էն 18 ֆր. 45 ս. — Բ. քաղաքէն Պ. Ա.-ի միջոցով 1417 ֆ. 20 ս. — Սուլթինայի Հ. Ց. Դ. խմբէն 20 ֆր. — Արտասահմանեան մի խմբէն 10 ֆրանք, — Վիւրտէնբերգէն Գ. Աբ-էն 2 ֆր. 50 ս. Փրէյբէրգէն „Յառաջ" խմբէն 54 ֆր. 20 ս. — Կ. քաղաքէն „Կռունկ" խմբէն 132 ֆր. 50 ս. Պ. քաղաքէն Ե.-ի միջոցով՝ 264 ֆր. 55 ս. — Կարլսրուէն Մ.-էն 17 ֆր. 20 սանթ: Գումար 4019 ֆրանկ 30 սանթ.:

ԳԱՀԻՐԷԻ Կոմիտէն՝

„Արուսեակ" խմբէն Ծիածանի ձեռամբ. սեպտ. ամիս 29 դահեկան ողջ, հոկտ. — 18, Նոյեմբեր — Աշոտ, Վահան, Մելիք, Շապուհ, Սամսոն, Կարօ 5-ական: „Սարսափ" խմբէն սեպտ. հոկտ. Նոյեմբ., Մէնտոր, Մասիս, Փայլակ 30-ական, Շահէնէ (դեկտ. եւ յունուար) 10-ական, Զարմայր 10, եւս յունուարի ամսականը 5: — Ինթակոմիտէի ձեռամբ՝ Աշոտ 50, Արշաւ 5, Արեւելք 15, թիւ 12575 անդորրագրէ 10 դահ.: Գումար 287 դահեկան ողջ:

ՆԱԽԱՀԱՆԳՍՏԻ Կոմիտէն՝

„Զարթ" խմբից յունուարի ամսականներ՝ Ա. Ալթուն 5 ռուբլի, Բաժակ 2, Փիլիշանեան 1. 50, Զ. Դիւտեն, Օ. Նորատունկ, Սիրունիկ, Քիշմիշ, Զարեր, Գինի, Մնացորդ, Լոյս նիզակ, Ծխախոտ, Մուրատ, Լուսնթագ, Թոչուն, Արմէն մի-մի ռուբլի, Մարկոս, Ալեւոր 50-ական կոպ.: Գումար 23 ռուբլի 50 կոպէկ:

ՏԱՊԱՐ Կեդր. Կոմիտէն՝

Քրմապետի հարսնիքէն 100 դահեկան, Գանրիման 20, Նարեկացի (մարտ), Հրաչ (մարտ), Ս., Ց. 40-ական, Վերի Քրմապետ 108 դահեկան: Գումար 388 դահեկան:

ՔՕՄՏԱՆՁԱՑԻ „Դեւեան" խումբ (դեկտ. եւ յունվ. ամսավճարներ)՝ Գէորգ Ստեփանեան 10 ֆրանք, Վահրիշ 4, Շ. Հ. 1, Կակապետ Հօրոյեան 5. 50, օր. Ց. Թ. 1 ֆր., Ը. Թ. 6 ֆր., Զ. Թ. 3, Գ. Գ. Ցովակիմ, Ս. Ե., Ց. Ց. մէկ-մէկ ֆրանք: Գումար 34 ֆրանք 50 սանթիմ:

ՄԱԿԵԴՈՆ կոմիտէն՝ „Շաքէ" Հայուհեաց ընկ. 222 լեւ 10 սանթ., „Արեւելեան" խումբէն 36, „Բաբկէն Սիւնի" խ. 33, „Արծիւ" խ. 17, „Հեթում-Դազիկ" խ. 16, „Վեպուհ" խ. 22, „Հայկակ" խ., „Ասլան" 20-ական „Թորգոմեան" խ. 9. 25, Սիմէոն Ծերունի 7, Տիգրիս 5 լեւ: Գումար 407 լեւ 35 սէնթ:

ՍՕՓԻԱՅԻ ենթակոմիտէն՝ Մ. 10 լեւ, Միութիւն 2, Համբօ 1. 50, Մուրատ 1, Ածելի 2, Գազազ 5, Խլօ 2, Լ 5, Արծ. 5, Դարենանցի 4, Նշան 3, „Սերոբ" խմբէն 22 եւ յունվ. փետրվ. եւ մարտի ամսականները 33, Սեփ 2, Ար. 2, Ն. 1, 50, Ք. 1, Խումբ մը 8 լեւ: Գումար 110 լեւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն՝

ՀԷՎՐՀԻԼԻ Կոմիտէէն (սեպտ.-դեկտ. 1899)՝ Ան. Քիլ., Խա. Եզ., Ցո. Դեր., Ցով. Խա., Կա. Սար. 8-ական դոլար, Ցա. Լու. 6, Ցո. Եղ. 1. 25, Կա. Ստե. 12. 50, Տիգ. Ալ. 2, Զանազան 2. 50 դոլար: Գումար 64 դոլար 25 սէնթ:

ՍԷՆԹՐԱԼ ՓՕԼՍԻ կոմիտէէն (մայիս-դեկտ. 1899)՝ Գուրգէն, Սալման 7 դոլար, Զաբէ 2, Ա. Մ. 5. 50, Արամ 6. 50, Վարդ 1, Մարտիկ 1. 25 դոլար: Գումար 30 դոլար 25 սէնթ:

ՔԱՆՔԸՐՏԻ Կոմիտէէն (յունվ.-դեկտ.՝ 1899)՝ Գ. Դ. 16. 27 դոլար, Ասգիշ 14. 20, Ա. Ր. 13. 10, Ողջ 13. 30, Կայծքար 20. 60, Հրատ 12. 45: Ապաճ 2. 30 դոլար: Գումար 92 դոլար 22 սէնթ:

ՎԱՅԹԻՆՍՎԻԼԻ Կոմիտէէն (հոկտ.-դեկտ. 1899)՝ Կ. Ս., Պ. Մ., Ա. Պ. Զ. 5-ական դոլար, Կ. Ֆ. Թ. 10, Ց. Պ., Խմբապետ, Գ. Մ. մէկ-մէկ-ական դոլար: Գումար 29 դոլար:

ՈՒՏՏԻ Կոմիտէէն (յունվ.-դեկտ. 1899)՝ Խ. Զ. 11 դոլար, Ցապպան, Հայկաթոռ, Բռունցք, Նժդեհ 10-ական, Ա. Թիլկատի, Կիւրինցի, Ծածուկը 5-ական, Լթամ 7, Ոմմ 3, Օրիորդ, Խոնարհ 2-ական, Ան., Մ. Զ., Պ. Խ. մէկ-մէկական, անդամավճարներէ եւայլն 21. 95 դոլար: Գումար 104 դոլար 95 սէնթ:

ՇԻԳԱԿՕԻ Կոմիտէէն (մարտ-դեկտ. 1899)՝ Ծաղիկ Հայաստանի, Կ. Ա. Խ., Գուրգէն, Ս. Է., Ս. Ց., Քաջքերունի, Բագրատունի, Վահանձն 5-ական, Գեղամ, Ոմ 2-ական, Մոնթէ, Քրիսթօ 3-ական, Կարօ, Սուրէն, Ն. Քեշ, Ազգային մը, Ծերունի Սիմոն, Նշան, Ծերուկ, Ոմ մէկ-մէկական, անդամավճարներէ եւայլն 21. 88 դոլար: Գումար 79 դոլար 88 սէնթ:

ՊՕՍԹՕՆԻ Կոմիտէէն (յունվ.-դեկտ. 1899)՝ Ա. Լէօ 20 դոլար, Ց. Ղազար, Տայրը, Հ. Ֆ. Մ. 10-ական, Սիսակ 8, Կայծակ 7, Մարթին 6, Ա. Ք., Ս. Պոյ., Ց. Պալ., Պ. Սաս, Ն. մէվ., Կ. Իս., Թար. Դոս., Ղ. Մարգ. 5-ական, Եղոյ 2, Օ. Ա., Ապտալ, Կ. Դ., Կ. Ռուս., Օրիորդ Ռ., Ոմն, Ս. Շամ., Գ. Նարգ., Ոմն, Ղ. Ֆ. Մ. մէկ-մէկ-ական, Զ. Խ. 5, Պնակի հասոյթ 8, անդամավճարներէ եւայլն 67. 47 դ. Գումար 203 դոլար 47 սէնթ:

ԼՕՐԷՆՍԻ Կոմիտէն ինքը ստացեր է՝ Սկեպտիկ Վահան 5 դոլար, Մորուք 4, Ապար 3, Ակնարկ 2. 25, Հ. 2, Ծովատ Ֆ. 2, Քանդիշ 1. 50, Զուլում, Դամոն, Ց. Ճ. Գ. Թ., Մ. Գ., Ս. Ը., Ց. Հ. մէկ-մէկ, Ց. Գ., Պ., Մ. Ռ., Շուշան Քար 50-ական սէնթ, Պ. Պ. 25 սէնթ. Ուստուրա 1 դոլար: Գումար 30 դոլար:

ՅԱՒԵԼՒԱԾ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միութեան խնդրի մասին մեր հրատարակած „Յաւելուածի" առիթով վերջին շաբաթները զանազան տեղերից (Կիպրոսից, Ամերիկայի զանազան քաղաքներից և Մանչէսթրից) դիմում են մեզ պահանջելով պատասխան: Մենք չենք տալիս այդ նամակները, որովհետև նոյն մտքով մի նամակ մի ամիս առաջ մենք տպագրեցինք առանձին և տարածեցինք „Դրօշակի" № 2-ի հետ: Լեզուի և ուղղագրութեան զանազանութիւնները շատ քիչ հիմք են մեզ համար, որպէսզի մեր հրատարակութիւններում տեղ տանք իւրաքանչիւր դիմումի: Սակայն, իպատասխան այդ գրութիւնների, պարտք ենք համարում յայտնել, որ ատեանի հարցը պատկանում է „Դաշնակցութեան" կամքը արտայայտող մարմինների լիազօրութեան և հետևաբար „Դրօշակի" խմբագրութիւնը կը հրատարակի „Դաշնակցութեան" որոշումը, երբ նա կը կայանայ:

Նոյն հարցի վերաբերմամբ „Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան" արած պաշտօնական յայտարարութեան առիթով („Մարտ", թիւ 24) ստիպւած ենք կրկնել, իգիտութիւն հասարակութեան, որ այս դէպքում մենք՝ արդէն տեղեակ լինելով „Դաշնակցութեան" ընդհանուր հայեցակէտերին, բացարձակապէս կարող ենք յայտնել. — Վերակազմեալ Հնչակեան Կեդրոնը չպիտի ստանայ մեզնից իր ուղղմամբ պատասխան, քանի որ մեզ յայտնի է նրա կազմը: Մեր այս պայմանը գոյութիւն ունի 1896 թուից և ուրեմն նորութիւն չէ („Յաւելուած", երես 21): Եւ եթէ „Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը" ճշմարտութիւնը պարզելու համար մեզ դիմելու կարիք է զգում, բնականաբար նա պէտք է նախ հոգայ՝ դրա համար հարկաւոր ճանապարհը հարթել: Հակառակ դէպքում՝ մենք աւելի շուտ պատրաստ ենք մեր ընթացքի համար դատապարտուել մեր հակառակորդներից և նոյնիսկ Կիպրոսում, Ամերիկայում, Մանչէսթրում, Փարիզում և Լոնդոնում ցրւած բոլոր „չէզոքներից", քան ուղղակի կամպրօմիսների դիմել:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ